№ 261 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 25 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1909
ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 25 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 261

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 228.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1910 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(38-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և միևնոյն ժամանակ 40 կ. նամականիշ։

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով առեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։ Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխանդ. բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ

ԲԵՄԱԿԱՆ 30-ԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Ն. Մ. Գաբունիա-Ցագարելիի

Կիրակի, նոյեմբերի 29-ին

ՑԵՐԵԿՎԱՅ ժամը 12-ին. տօնակատարութեան հանդէսի բացումը, ողջունումն երգեցիկ խմբով և նուագածութեամբ, շնորհաւորանքներ պատուիրակների, ընկերութիւնների և հիմնարկութիւնների ներկայացուցիչների ու մասնաւոր անձերի կողմից և այլն։ Երգիչ Ի. Պ. ՍԱՐԱՋԵՎԸ կերգէ իր ուղերձը։ Երգեցիկ խումբ վրաց ֆիլարմօնիական ընկ. և նուագախումբ Զ. Պ. Պալիեվի ղեկավարութեամբ։

ԵՐԵԿՈՅԵԱՆ ժամը 8-ին. վրաց դրամատիկ խումբը՝ մասնակցութեամբ Ն. Մ. ԳԱԲՈՒՆԻԱ-ՑԱԳԱՐԷԼԻԻ կը ներկայացնէ՝ 1) «Երկու որբեր», 5-րդ գործողութիւն, հեղ. Դէնըրիի, թարգմ. Ցագարելիի, 2) «Քանդված օջախ», 3-րդ գործող., հեղ. Սունդուկեանցի, 3) վրաց դերասանների յարգանքը Ն. Մ. ԳԱԲՈՒՆԻԱ-ՑԱԳԱՐԷԼԻԻՆ, 4) «Խանում», 1 գործող., հեղ. Ա. Ցագարելիի։ Վերջում ԱՊՕԹԷՕԶ.

Ներկայացումից ստացված դրամական ամբողջ արդիւնքը, նոյնպէս և այլ դրամական նուէրները կը յատկացվեն դրամագլուխ կազմելու Ն. Մ. Գաբունիա-Ցագարելիի պառաւած ժամանակ նրան ապահովելու համար։

Դրամական նուէրները խնդրվում է ուղարկել կօմիտէտի գանձապահ Ալէքսանդր Պետրօվիչ Սարաջեվի անունով։

Տոմսակները նոյեմբերի 20-ից վաճառվում են թատրոնի կասսայում։

Վրաց Դրամատիք. Ընկ. Վարչութիւն և Յօբելեանական Կօմիտէտ

(տռ.) 1259. 0—1

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ

Կովկասեան գիւղատնտեսների համագումարը վերջացաւ։

Մենք ունինք մի քանի տեղեկութիւններ համագումարի աշխատանքների մասին։ «Մշակի» առաջիկայ համարներից մէկում կը հաղորդենք լրացուցիչ տեղեկութիւններ։

Անկախ այն գիտնական և գործնական բովանդակութիւնից, որ ունեց այդ համագումարը, նա ունէր մի բարոյական և կուլտուրական կարևոր նշանակութիւն։

Եւ ահա ինչ կողմից։

Համագումարը, լինելով զանազան տեղերում գործող մարդկանց համախմբում, պարունակում էր իր մէջ հանրային խորհրդակցութեան, հանրային գործակցութեան համերաշխ միասնակցութեան այն տարրերից մէկը, որոնք այնքան կարևոր են ընդարձակ տնտեսական և հասարակական զարգացման համար։

Համագումարի այդ նշանակութիւնը զգացվեց Թիֆլիսում ժողոված գիւղատնտեսների շրջանում և այնքան ամրացաւ բոլորի գիտակցութեան մէջ նրա կարևորութիւնը, որ շատ հեշտութեամբ և մեծ համակրութեամբ ընդունվեց համագումարների պարբերական կրկնութեան առաջարկը։

Եւ համագումարը իր որոշումների մէջ առանձին տեղ տալով պարբերական համագումարների կազմակերպութեանը, ծրագրեց իւրաքանչիւր երեք տարին մի անգամ հրաւիրել համագումարներ Անդրկովկասի զանազան կենտրոններում՝ Թիֆլիսում, Քութայիսում, Երևանում, Գանձակում և ուրիշ տեղերում։

Պարբերական համագումարների գաղափարը գրաւիչ եղաւ գիւղատնտեսների համար նաև նրանով, որ իւրաքանչիւր մարդ գիտենալով, թէ որոշ ժամանակ պէտք է տեղի ունենայ համագումար, կը պատրաստվի նրա համար և հաւատացած կը լինի, որ նա ունի մի բարոյական ատեան, որին նա կարող է դիմել իր գիւղատնտեսական կեանքի կնճիռները լուծելու համար։

Յաջորդ համագումարը որոշված է դարձեալ հրաւիրել Թիֆլիսում, իսկ այնուհետև փորձել ուրիշ քաղաքներում։

Անկասկած՝ բոլորովին անկախ ընդհանուր համերկրային համագումարներից կարող են նաև կազմվել շրջանային տեղական համագումարներ, ինչպէս այդ տեղի ունեցաւ նորերս Քութայիսում։

Համագումարներ կազմելու պահանջը ցոյց է տալիս, որ զարգանում է մեր երկրի մարդկանց մէջ պահանջ հաղորդելու միմեանց իրանց փորձերը, դիտողութիւնները և խորհրդածութիւնները և պայմանաւորվելու գիւղատնտեսական ձեռնարկութիւնների համար թէ անհատական և թէ հաւաքական ույժերով։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Վաշինգտօն, 23 նոյեմբերի

Բացվեց կօնգրէսի նստաշրջանը։ (Հ. Գ.)

Լօնդօն, 23 նոյեմբերի

Վերջին ծովային փոթորկի ժամանակ զոհվեցին 75 մարդ։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 23 նոյեմբերի

Ֆիզիքական օբսերվատորիան հեռագրական տեղեկութիւններ ստացաւ Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի զանազան քաղաքներից Ատլանտեան ովկիանոսի վրա բռնված մրրիկի մասին, որ սկսվել է նոյեմբերի 21-ի գիշերը շնորհիւ անսպասելի կերպով երևացած ցիկլօնի, որի խորութիւնը մի քանի ծովափնեայ քաղաքներում հասել է 715 միլլօմետր ճնշման։ Արձակված քամու ույժը միևնոյն քաղաքներում հաւասար էր մինչև 9 բալլի, վերջում հաւասարվելով շտօրմի ույժին։ Մրրիկը շարունակվում էր ամբողջ Ֆրանսիայում և Գերմանիայում, ընդգրկեց Դանիայի մի մասը, և անցաւ Սկանդինաւեան թերակղզու հարաւային մասը։ Փոթորիկը ամենամեծ ույժի հասաւ նոյեմբերի 24-ի գիշերը։

Օբսերվատորիայի տեղեկութիւնների համաձայն՝ նոր ուրագաններ են սպասվում Իսլանդիայում, դէպի ուր շարժվում է կատաղի քամու նոր կենտրոնը։

Ռուսաստանում ցիկլօնի երևման հետևեց տաք եղանակ, որ կը մնայ մի քանի օր։ Մինիմալ ճնշման խորութեան համաձայն նոյեմբ. 21-ը օբսերվատորիան դնում է բացառութիւնների կատեգորիայում։ (Հ. Գ.)

Սիդնէյ, 23 նոյեմբերի

Կառավարութիւնը սկսում է եռանդուն միջոցներ ձեռք առնել լեռնային բանւորների գործադուլի դէմ կռւելու համար։ Բանւորների միութեան նախագահի և քարտուղարի կալանաւորութիւնից յետոյ, նաև մի ուրիշ աչքի ընկնող ներկայացուցչի ձերբակալումից յետոյ, ձերբակալվեցին կրկին երկու պարագլուխներ։ (Հ. Գ.)

Բեռլին, 23 նոյեմբերի

Ազատ մտածողները բէյխստագ մտցրին մի առաջարկութիւն Էլզաս-Լօտարինգիան գերմանական միութեան աւտօնօմ պետութիւն ճանաչելու մասին, ժողովրդական ներկայացուցչութեամբ, հիմնված բէյխստագի ընտրողական իրաւունքի սկզբունքների վրա։ (Հ. Գ.)

Նոյեմբերի 10-ին պրօֆէսոր Մեչնիկով զեկուցում կարդաց Պարիզի բժշկական ակադեմիայում իր հետազօտութիւնների մասին, որ նա կատարել է մանկական թանչքի (դիարիայի) միկրօբը որոշելու համար։ Կապիկներին արած մի շարք պատւաստումներից յետոյ աջողվեց իմանալ, որ դիարիայի միկրօբը մեծ քանակութեամբ բուն է դնում հում պտուղների և բանջարեղէնների մակերևոյթի վրա, նոյնպէս և պանրի վրա։ Վարակվելու համար երբեմն բաւական է լինում միայն հասարակ կերպով դիպչել այդ պտուղներին։ Վարակումը տեղափոխում են նոյնպէս և ճանճերը։

Պրօֆէսոր Մեչնիկովի զեկուցման առարկայ կազմող միկրօբը վաղուց արդէն գտնված է աղիքների մէջ ի թիւս միլիօնաւոր ուրիշ միկրօբների։ Սակայն մինչև այժմ յայտնի չէր, որ նա առաջացնում է դիարիա հիւանդութիւնը։ («Б. В.»)

Էնզելի, 17 նոյեմբերի

Մօյ-ուս-Սալթանէի և իր եղբօր խումբը Նամին գիւղից յետ դարձաւ Աստարա։ Նրանք Արդաբիլ մտնելու հնարաւորութիւնից զրկվելով և շահսէվաններին գիւղերից հալածանքը գտնելով աննպաստակայարմար, Նամինում մնալն էլ նոյնպէս, յետ դառնալը խոհեմութիւն համարեցին։ Մի 150 հոգի յեղափոխականներ այստեղով գնացին Ռաշտ, իսկ մնացեալը Աստարայում սպասում է Թէհրանից կարգադրութեան։

Պարսկաստանի դրութիւնը շատ խորհրդաւոր է և լուրջ անակնկալների առաջ է կանգնած այսօր։

Խօլերան Աստարայում մի քանի զոհ է տարել այս քանի օրս։ Մուջահիդ

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

Չէ կարելի անուշադիր թողնել այն հանգամանքը, որ մի քանի ժամանակից գերմանական մամուլը առանձին յամառութեամբ խօսում է այն վտանգների մասին, որ սպառնում են Ռուսաստանին Հեռու Արևելքում։ Այդպէս, օրինակ, «Koenigsb. Allg. Zeitung» լրագրի վերջին համարում տպված է մի ընդարձակ առաջնորդող յօդուած, որ գրել է լրագրի զինուորական աշխատակիցը և նուիրված է Եապօնիայի պատերազմական պատրաստութիւններին, որ կատարվում են Ռուսաստանի դէմ պատերազմ սկսելու ակներև նպատակով, կամ թէ չէ պատերազմը անհնարին դարձնելով, Եապօնիան ուզում է այնպիսի պահանջներ անել, որոնք կը լրացնէին պօրտսմուտեան դաշնագրի պակասները, բաւարարութիւն տալով եապօնական հասարակական կարծիքին, որը դժգոհ էր պօրտսմուտեան դաշնագրից։

Կէօնիգսբէրգեան լրագրի զինուորական աշխատակիցը այն համոզմունքն է յայտնում, որ Եապօնիան կատարելապէս անսպասելի կերպով կը սկսի պատերազմը և որ Վլադիվօստօկը այդ դէպքում նոյն դրութեան մէջ կը գտնվի, ինչ վիճակ որ ունէր Պօրտ-Արտուրը անցեալ պատերազմի հէնց սկիզբներում։

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պօլիս, 8 նոյեմբեր

Ադանայէ առնուած լուրերը կաւելցնեն նոր աղէտներ հին աղէտներու վրայ, որոնք իրենց միայն և տեւական թարմութիւնովը կը մնան միշտ նոր թշուառութիւններ։ Նոր աղէտներու տեղի տուած են, այս անգամ, առատ անձրևներ ու Ջիհան գետին յորդութիւնը, որ բարբարոսներու թափէն աւելի ուժգին կատաղութիւնով խուժած է ցանուած արտերու և ողորմելի քաղաքին վրայ։ Փորձանքը խտրութիւն դրած չէ ոչ քրիստոնեայի և ոչ իսլամի։ Յաղթական խուժը, որ թալանած, կողոպտած, կոտրած, սպանած՝ հարստացեր էր, բնութեան անողորմ հարուածին ներքև կորացած, այժմ յուսահատ աչքով կը տեսնէ իր քանդումը Ջուրին, հեղեղին ու աւազակոյտին ներքև. մոխիրներու մէջ հայերու համար կանգնուած տնակներու հետ, Ջուրին հոսանքին առջև ինկած են իսլամներու անձեռնմխելի՝ գոռոզ շէնքերը։

Ծանր դաս մըն է ատ իրենց. անշուշտ պէտք է ըմբռնած ըլլան, որ եթէ իրենց դրացի հայ-քրիստոնեաներու տուները կանգուն կեցած ըլլային, Ջուրի հոսանքներու առջև, իբրև թումբ, օգտակար կըլլային իրենց տուներու համար։ Իրենք, իրենց բարբարոսի ձեռքերովը, դրացիներու տուները քանդեցին, անձրևն ու հեղեղը եկան կերպով իւիք վրէժ լուծելու իրենցմէ. ատով աղէտքի դժբաղդ հաւասարութիւն մը՝ հաւասար հողի վրայ դրաւ զիրենք ալ իրենց քրիստոնեայ դրացիներու հետ։ Թիւրք կիներ, մերիններու սիրտը կակծեցնելու համար, ծաղրեցին մեր Աստուածը, ծաղրեցին մեր հաւատքը. հիմա ծմրած, ալ յոխորտալու իրաւունքը չունին։

Կառավարութիւնը, կուսակալէ առնուած հեռագիրներու համեմատ, փութաց օգնութիւններ հասցնելու։

Կիլիկիոյ կաթողիկոսը իր հրաժարագրի մասին նոր պնդումներ կընէ։ Նոր վարչութիւնը գրեց, որ չհեռանայ իր աթոռէն՝ խոստանալով պէտք եղած դիմումներն ընել ուր որ պէտք է։

Դուրեան պատրիարք, նոր քաղաքական ժողովի պատուիրակութեան մը հետ տեսակցելով, յայտարարած է, որ ինքը յանձն չառներ աթոռ դառնալ պարզ խոստումներու վրայ։ Կառավարութիւնը, միւս կողմէ, կը յայտնէ, որ Կիլիկիոյ զինուորական ատեաններուն պաշտօնական թուղթերը քննութեան պիտի ենթարկէ անաչառ մարմինի մը կողմէ։

Այստեղ կը բարձրանայ նոր հարց մը. տարբեր բան է նոր քննութիւններ բանալ տրուած վճիռներու մասին, և բոլորովին տարբեր՝ տրուած վճիռները քննել առ ձեռըն գտնուած թուղթերու վրայ։ Զինուորական ատեաններուն վճիռները, իրենց կողմէ պատրաստուած թուղթերու վրայ, համաձայն են անշուշտ իրենց արձակած վճիռներուն։ Այդ կէտի մասին մենք կառարկենք, որ քննութիւնները կատարուած են բոլորովին միակողմանի, իսլամներու կողմէ առաջուց պատրաստուած ծրագիրներու վրայ։ Քննութիւնները ճիշդ ըլլալու համար, պէտք է լսել հայ աղբիւրները։ Այդպիսի բան մը հնարաւոր ըլլալու համար, անհրաժեշտ է դատական վերաքննութիւն ընդունիլ սկզբունքով և, այս անգամ, դատեր ու տեղափոխութիւն ընել։ Մերինները տեղին վրայ չեն համարձակած դիմում ընել զինուորական ատեաններու, ու շատ յայտնի պատճառներով, նախ որ, տեսնուած անիրաւութիւններէն համոզուած են, թէ զուր է արդարութիւն յուսալ, երկրորդ՝ որ միշտ սպառնալիք եղած է չհամարձակիլ դատաբան դիմելու։ Այսպէս՝ արդարադատութեան գործը կողմնակի ուղղութիւնով գործեց Ադանայի մէջ՝ ի նպաստ բուն ոճրագործներու։

Նախորդ քաղ. ժողովը իր հակառակորդներու կողմէ ամբաստանուեցաւ, թէ կը ջանար պատրիարքը իր աթոռը դարձնել, ուստի, հեռագիրներով, հանրագիր բողոքներով փափագ յայտնուեցաւ, որ ուժ, համաձայնութիւն տրուի պատրիարքին՝ պնդելու իր հրաժարագրի վրայ։ Ազգ. երեսփոխանութիւնը ինք ալ, տարուած այդ հոսանքէն, քուէարկեց քաղ. ժողովի հրաժարականը և մերժեց կրօն. ժողովի հրաժարագիրը, որ կը բանաձևէր թէ ինքը պարտք կը համարի հրաժարելու՝ իր ուժերը սպառած տեսնելով։ Իսկ այսօր նորընտիր քաղ. ժողովն ու կրօնականը կը ջանան պատրիարքը իր աթոռը դարձնել։ Այս հակասութեանց խելքս չի հասնիր։

Ազգը կը մնայ առանց պատրիարքական իշխանութեան։ Պատրիարքութիւնը կամ պէտք է և կամ ոչ. եթէ պէտք մըն է, հարկ է որ իր պատրիարքովը կանգուն մնայ ան, իսկ եթէ ոչ, ալ պէտք չի մնար զուր պայքարներու։ Ոչ, պէտքը ունինք պատրիարքութեան, ու այսուհետև պատրիարքը անգամ մը որ դարձած ըլլայ իր աթոռը, մնալու է այնտեղ և պայքարը մղուելու է պաշտօնի վրայ եղած ատեն։

Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Մօսկվա, 21 նոյեմբերի

Մօսկվայի գիւղատնտեսական ճեմարանի ուսանողները միաձայն որոշեցին ողջունել Ձեզ, թանգագին Ալ. Հայրապետովիչ, Ձեր յօբելեանի փառաւոր օրը։ Ձեր կենդանի եռանդը և գործունէութիւնը ոչ միայն կովկասեան, այլ և Ռուսաստանի տնտեսութեան օգտին մեր մէջ յարուցանում է յարգանքի զգացմունք։ Ձեր աշխատանքը վաղուց արդէն պահանջում էր ժամանակակիցների արդարացի գնահատումը։ Մենք հաւատում ենք, որ Ձեր կուլտուրական աշխատանքը, թանգագին Ալ. Հայրապետովիչ, դեռ կը շարունակվի երկար և ձիգ տարիներ, և բաղդաւոր ենք այսօր զգալ, որ Ձեզ հետ կապված ենք ոչ միայն արհեստով, այլ և մեր alma mater-ով։

Ուսանողների աւագներ՝ Վալերիան Շելկօֆնիկով, Ալէքսէյ Բէլով

Պետերբուրգ, 21 նոյեմբերի

Պետրովեան Ակադէմիայի սաները, ժողոված ակադեմիական ճաշկերոյթին, ողջունում են իրանց թանգագին ընկեր Ալէքսանդր Քալանթարին նրա երեսնամեայ աչքի ընկնող հասարակական և գրական գործունէութեան համար գիւղատնտեսական ասպարէզում և ցանկանում են նրան ույժ և քաջութիւն նրա շարունակութեան համար։ Վլասսկիյ

Պետերբուրգ, 20 նոյեմբերի

Ալ. Քալանթարի 30-ամեայ գիւղատնտեսական գործունէութեան տօնակատարութեան առիթով մի խումբ մարդիկ, որոնք հետաքրքրվում են մայրենի երկրի առաջխաղացութեամբ, ողջունում են խորին կերպով յարգված ու թանգագին յօբելեարին և յայտնում իրանց զարմանքը և կենդանի երախտագիտութեան զգացմունքները այն ահագին և բազմակողմանի աշխատանքի համար, որ գործադրեց նա բարձրացնելու տնտեսական կացութիւնը և ժողովրդի կուլտուրական զարգացումը։ Ալ. Քալանթարի բեղմնաւոր գործունէութիւնը գնահատված է ոչ միայն հասարակութեան ինտելիգենտ դասի կողմից, այլ և շատերից. և դա թող ծառայէ նրան յենարան կասկածանքի րօպէներին և կեանքի դժուար ժամանակը։ Ցանկանում ենք դեռ երկար տարիներ ապրել՝ շարունակելու նոյն աշխատանքը նոյն եռանդով և դիմացկունութեամբ աշխատաւոր ժողովրդի օգտին։ Փառք Ալ. Քալանթարին։

Լիազօրութեամբ՝
Պրօֆեսոր Վարդան Վարդանեան

Խարկով, 21 նոյեմբերի

Խարկովի Գիւղատնտեսական Ընկերութիւնը ողջունում է Կովկասի աւագագոյն ագրօնօմ Ալ. Հ. Քալանթարին՝ նրա յօբելեանական օրին, երբ լրանում է 30 ամեայ գիտնական-գործնական գործունէութիւնը հասարակական հողագործութեան ասպարէզում։ Ցանկանում ենք և յետագայում պտղաբեր գործունէութիւն յօգուտ մայրենի երկրի առ ի խրատ ռուս ագրոնոմների երիտասարդ ընտանիքի։

Նախագահ Կուզնեցով

—

Բագու, 21 նոյեմբերի

Բագուի եկեղեցական ծխական հոգաբարձութիւնը շնորհաւորում է Ձեր գիւղատնտեսական գործունէութեան 30-ամեակը։

Հոգաբարձ. նախագահ՝ Բեգզադեան

—

Սուխում, 20 նոյեմբերի

Սուխումի Գիւղատնտեսական Ընկերութիւնը, ողջունելով Ձեզ Ձեր յոբելեանի օրը, ցանկանում է Ձեզ բարի առողջութիւն՝ շարունակելու օգտակար աշխատանքը յօգուտ հայրենի Կովկասի։

Նախագահի փոխարէն Եւրլով

—

Պետերբուրգ, 20 նոյեմբերի

Բարձր գնահատելով Ձեր աչքի ընկնող ծառայութիւնը Կովկասի գիւղատնտեսութեանը, ֆինանսների մինիստրութեան պարբերական հրատարակութիւնների խմբագրութիւնը բերում էր իր անկեղծ բարեմաղթութիւնները 30-ամեայ յոբելեարին, ցանկանալով ույժ և առողջութիւնը յետագայ բազմօգուտ գիւղատնտեսական գործունէութեան։

—

Պետերբուրգ, 20 նոյեմբերի

Ողջունելով Կովկասի ամենահին գիւղատնտեսներից մէկի ագրոնոմիական գործունէութիւնը, «Сельс. Хозяйство»-ի խմբագրութիւնը յղում է յարգելի Ալ. Հայրապետովիչին անկեղծ շնորհաւորումներ և մաղթանքներ՝ դեռ երկար տարիներ անշէջ եռանդով աշխատելու յօգուտ մայրենի երկրի և ի փառս անբաժան Ռուսաստանի։

Խմբագիր Գրուզդեվ

—

Սուխում, 20 նոյեմբերի

«Черномор. Сель. Хоз.»-ի խմբագրութիւնը յղում է յարգելի կոլլեգային ողջոյն և ցանկութիւններ՝ դեռ երկար տարիներ աշխատելու գիւղատնտեսական ասպարիզում։

Խմբագրի տեղ՝ Պօդգուրսկիյ

—

Բրասովօ, 20 նոյեմբերի

Ջերմագին ողջունում եմ հանդիսաւոր գնահատումը Ձեր բազմամեայ ստեղծագործող գործունէութեան յօգուտ Թանգագին Կովկասի։

Կլինգէն

—

Էջմիածին, 21 նոյեմբերի

Ընդունեցէք մեր ամենալաւ բարեմաղթութիւնները Ձեր բազմօգուտ գործունէութեան 30-ամեայ յոբելեանի առիթով։

Յուսիկ, Երուանդ, Կոմիտաս վարդապետներ և Յովհաննէս Յովհաննիսեան

—

Ելենովկա, 19 նոյեմբերի

Շնորհաւորում եմ հողագործական պիոների 30-ամեայ եռանդուն գործունէութիւնը ասպարէզի վրա։

Սարգիս եպիսկոպոս

—

Վենետիկ, 20 նոյեմբերի

Մաղթում ենք բարօրութիւն բազմարդիւն յոբելեարիդ գիւղատնտեսական գործունէութեանդ երեսնամեակի առիթով։

Խմբագրութիւն «Բազմավէպի»

—

Կ. Պոլիս 21 նոյեմբերի

30-ամեայ լրացած բեղմնաւոր յոբելեանի առիթով բերում եմ սիրելի Քալանթարին սրտագին շնորհաւորութիւններ։

Կիւրճեան

—

Թիֆլիս, 21 նոյեմբերի

Թիֆլիսի կանանց բարձր կուրսերի խորհուրդը ողջունում է խորապէս յարգված Ալ. Քալանթարին և մաղթում նրան ույժ և առողջութիւն՝ շարունակելու այդքան բեղմնաւոր գիտական-հասարակական գործունէութիւնը։

Տեսուչ՝ պրոֆեսոր Բլագովիդով

—

Սև-քաղաք, 21 նոյեմբերի

Շնորհաւորում ենք անկուն աշխատաւորիդ 30-ամեայ պտղաւէտ գործունէութիւնը գիւղատնտեսական և հասարակական ասպարէզում՝ ցանկանալով Ձեզ առողջութիւն և երկար տարիներ նոյն եռանդով շարունակելու աշխատանքը յօգուտ Կովկասի բոլոր ժողովուրդների գիւղացի դասակարգի, որին Դուք այնքան սիրում էք։

Կատարինէ և Աւետիս Վաչեաններ

—

Քութայիս, 21 նոյեմբերի

Քութայիսի գիւղատնտեսական ուսումնարանը սրտանց ողջունում է Ձեզ, յարգելի յոբելեար Ալ. Քալանթար։

Շարաշիձէ

—

Բաթում, 20 նոյեմբերի

Բաթումի քաղաքագլուխ իշխ. Անդրոնիկովին։ Բաթումի քաղ. ինքնավարութիւնը՝ բերելով սրտագին շնորհաւորութիւններ Ալ. Հ. Քալանթարի 30-ամեայ բեղմնաւոր գիւղատնտեսական գործունէութեան յոբելեանի հռչակաւոր օրը, խնդրում է ձերդ պայծառափայլութեանը լինել թարգման իր զգացմանց յոբելեանական հանդիսում։

Քաղաքագլխի փոխարինող՝ Ժուրուլի

—

Նուխի, 21 նոյեմբերի

Կ. Հ. Բ. Ընկ. տեղական ճիւղը շնորհաւորում է Ձեր 30-ամեայ յոբելեանը ծանր, անբիծ աշխատութիւնների գիւղատնտեսական ասպարիզում և յոյս ունի տեսնել Ձեզ դեռ էլի տասնեակ տարիներ քաջառողջ աշխատող նոյն ասպարէզում, հասնելու համար այն բարձրութեան, որին Դուք ձգտում էք։

Նախագահ՝ Փալչեան

Անդամներ՝ Տէր-Պօղոսեան, Մելիք-Ալլահվերդեան, Պետրոսեան, Շահպազեան։

—

Թիֆլիս, 21 նոյեմբերի

Մեծայարգ Ալեքսանդր Հայրապետովիչ.

Հնարաւորութիւն չունենալով անձնապէս շնորհաւորել Ձեր 30-ամեայ անխոնջ և օգտաւէտ գործունէութիւնը Կովկասի հասարակական կեանքի շատ ասպարէզներում, խնդրեմ ընդունել Վրաց պատմութեան և ազգագրութեան ընկերութեան և անձնապէս իմ կողմից ամենաանկեղծ բարեմաղթութիւններ Ձեր բարեյաջողութեան համար, որով աչքի են ընկել Ձեր կեանքի երեսուն տարիները։

Վրաց պատմութեան և ազգագրութեան ընկերութեան նախագահ՝ Ե. Տակայշվիլի

—

Ն.-Նախիջևան, 21 նոյեմբերի

Ն.-Նախիջևանի հասարակութիւնը յղում է սրտագին ողջոյն ազնիւ, լաւ հասարակական գործչին։ Սրտագին ցանկանում է յոբելեարին աշխոյժ, եռանդ և ույժ՝ շարունակելու իր բեղմնաւոր գործունէութիւնը, որ քաջալերող օրինակ է հանդիսանում բոլոր իսկական մշակների համար։ Մի կողմից շրջապատված անտարբերներով, միւս կողմից լսելով յիմար ծաղրանք՝ թող անձնուիրաբար նուիրվենք աննկատ բայց, մեծ գործին՝ մեր բազմաչարչար ժողովրդի լուսաւորութեանը։

Բարեգործ. Ընկ. նախագահ, «Մշակի» հնուց աշխատակից Գ. Զալխուշեան

—

Իգդիր, 21 նոյեմբերի

Կ. Հ. Բ. Ընկ. Իգդիրի ճիւղը շնորհաւորում է Ալ. Քալանթարին՝ նրա գիւղատնտեսական գործունէութեան 30-ամեակի առիթով, ցանկանում է առողջութիւն՝ շարունակելու իր գործը յօգուտ գիւղացիութեան։

Խաչատուր Կանայեան

—

Բագու, 21 նոյեմբերի

«Баку» լրագրի կողմից և իմ կողմից շնորհաւորում եմ Ձեր 30-ամեայ յոբելեանը և Ձեր բեղմնաւոր հասարակական գործունէութիւնը։ Ցանկանում եմ Ձեզ դեռ երկար տարիներ ծառայել հայրենիքին։

Քրիստափոր Վերմիշեան

—

Բագու, 21 նոյեմբերի

«Թատրոն և Երաժշտ.» խմբագրութիւնը յղում է սրտագին շնորհաւորում հասարակական գործիչ Ալ. Քալանթարի յոբելեանի առիթով։

Անտոն Մայիլեան

—

Գորի, 21 նոյեմբերի

Կ. Հ. Բ. Ընկերութեան Գորիի ճիւղը ողջունում է Ձեր բեղմնաւոր և օգտաւէտ 30-ամեայ գործունէութեան յոբելեանը հասարակական ասպարէզում։

Վարչութեան նախագահ Դաւթեան

—

Մոսկվա, 22 նոյեմբերի

Սրտագին շնորհաւորում ենք Ձեր յոբելեանի հանդիսաւոր օրը և անկեղծ ցանկանում ենք, որ և առաջիկայում Ձեր բարեշնորհ գործունէութիւնը երկար տարիներ բարգաւաճի Ռուսաստանի համար։

Բուրմէյստէր և Վայն

—

Ստաւրոպոլ (նահանգ.), 21 նոյեմբ.

Ստաւրոպօլի հայոց ուսումնարանի ուսուցչութիւնը յօգուտ մայրենի երկրի գիւղացիութեան Ձեր 30-ամեայ անխոնջ գործունէութեան յոբելեանի օրը մատուցանում է Ձեզ, մեծարգոյ յոբելեար Ալ. Քալանթար, իր անկեղծ շնորհաւորութիւնը և ցանկանում Ձեզ նոյն եռանդով և տոկունութեամբ գործել ապագայում մեր բազմաչարչար գիւղացիութեան կուլտուրայի բարձրացման համար։

Աւ.-ուսուցիչ Տէր-Ենօքեան, Ս. քահ. Տէր-Յովհաննիսեան, վարժուհիներ՝ Տէր-Ենօքեան, Խէչօյեան, Տէր-Յովհաննիսեան։

—

Կաղզուան, 21 նոյեմբերի

Յարգելի ու պատուարժան Ալեքսանդր Քալանթար. այսօրվայ հանդիսի առիթով առաքում եմ Ձեզ իմ անկեղծ շնորհաւորութիւնները։

Աւեֆէրման

—

Կուշկա բերդ, 20 նոյեմբերի

Կուշկա-բերդի հայերի փոքրաթիւ գաղթականութիւնը ի բոլոր սրտէ միանում է Ձեր 30-ամեայ յոբելեանի հանդիսին, աղօթում, որ Ձեր գործունէութիւնը, որը մինչև օրս տուել է շատ գնահատելի արդիւնք, տայ նաև ապագայում մեր գիւղերին օգուտ՝ ժողովրդական կուլտուրական տնտեսութեան հողի վրա։ Յուսով ենք Ամենակարող Արարիչը կօգնէ Ձեզ ունենալ բաղդ և 50-ամեայ յոբելեանով ողջունելու Ձեզ։ Կեցցէ, կեցցէ պատկառելի յոբելեարը. մաղթում ենք Ձեզ բազում տարիներ մայրենի Կովկասի կուլտուրայի օգտին։

Հայ գաղութ

—

Բագու, 21 նոյեմբերի

Ուղարկում եմ ջերմ ողջոյն իմ ուսուցչին։

Արսէն Սափարեան

—

Ալեքսանդրօպոլ, 21 նոյեմբերի

Ուղարկում եմ լաւագոյն իղձերս՝ ժողովրդի իսկական բարեկամին։

Ուսուցիչ Կիրակոսեան

—

Ասխաբադ, 21 նոյեմբերի

Հոգով միանում եմ Ալ. Քալանթարի՝ հայրենիքի համար օգտակար և կուլտուրական 30-ամեայ գործունէութեան տօնախմբութեանը։

Եր[illegible]ուսատ. Բողդան Սարգսեան

—

Մոսկվա, 21 նոյեմբերի

Միացնում եմ իմ ձայնը հայրենակիցներիս ընդհանուր ձայնին, հայրենակիցներ՝ որոնք զգացված են այսօր իրանց սիրելի և թանգագին որդու հասարակական գործունէութեան 30-ամեայ յոբելեանի առիթով։

Սրտանց ցանկանում եմ առողջութիւն և յարատև գործունէութիւն երկար տարիներ։

Մովսէս Գ. Բուդաղեանց

—

Աւճալա, 21 նոյեմբերի

Սօգուրամեան լեռների գագաթներից Ձեզ ողջոյն ենք ուղարկում՝ ցանկանալով Ձեզ երկար տարիներ արդիւնաւէտ աշխատանք ի ծաղկեցումն մեր ամենիս համար Թանգագին Կովկասի։

Եւանգուլեան, Սարգիսեաններ, Դէմիդով

—

Կաղզուան, 21 նոյեմբերի

Շնորհաւորում ենք յոբելեանը ժողովրդի օգտին անդադրում աշխատաւոր բանւորի։

Ղազարեան, Մատղաշեվ, Նահապետեան

—

Պետերբուրգ, 21 նոյեմբերի

Կուլտուրա բուսցնելով, Յոբելեար, Դուք արժանացաք շնորհակալութեան պսակի. շնորհաւորում ենք։

Ալեք., Վարվառէ, Լևոն Մոտինեանցներ

—

Եալթա, 21 նոյեմբերի

Շնորհաւորում ենք 30-ամեայ գիւղատնտեսական գրական պօպուլեար գործունէութիւնը Ալեքսանդր Քալանթարի։

Գաբրիէլ աւ.-ք. Տուրփեանց

Երէցփոխ Նիկող. Ստեփանեան

—

Ղարայեազ, 21 նոյեմբերի

Գիւղացիական տնտեսութեան լաւացման մարտիկ և ուսուցիչ յոբելեար Քալանթարին բազում տարիներ։

Տէր-Գրիգորեան

—

Պեատիգորսկ, 21 նոյեմբերի

Շնորհաւորում ենք Ալ. Քալանթարի 30-ամեայ գործունէութեան յոբելեանը և ցանկանում ենք նրան աւելի մեծ աջողութիւն գիւղատնտեսական ասպարէզում։

Լաչինեան, Տէր-Յարութիւնեան

—

Ախալքալաք, 21 նոյեմբերի

Շնորհաւորում եմ Ալ. Քալանթարի յոբելեանը երկար համբերատար 30-ամեայ կուլտուրական աշխատանքի՝ յօգուտ ժողովրդի. ցանկանում եմ նրան առողջութիւն և ույժ՝ կատարելու 50-ամեայ յոբելեան այդ փշոտ ասպարէզում։

Կարապետ Շիրինեան

—

Աստրախան, 21 նոյեմբերի

Ամենախորին յարգանքս եմ մատուցանում Կովկասի գիւղատնտեսական կուլտուրայի եռանդուն պիոնէր Ալ. Քալանթարին՝ նրա գործունէութեան 30-ամեակի առիթով։

Սեդրակ քահ. Աղաբալեան

Թիֆլիս, 21 նոյեմբերի

Անկարող լինելով անձնապէս, տկարութեան պատճառով, ողջունել Ձեզ, այսօր խնդրեմ ընդունել իմ լաւագոյն բարեմաղթութիւնները։

Անկեղծ յարգող Մ. Խելմսկիյ

—

Թելաւ, 21 նոյեմբերի

Շնորհաւորում եմ Ձեր 30-ամեայ յոբելեանը, իբրև առաջադիմութեան բարեկամի և խաւարի թշնամու։ Կեցցէս։

Աբէլ աւ.-քահ. Սուքիասեան

—

(Նամակով)

Մեծարգոյ պ. Ալեքսանդր Քալանթար.

Ամեն մի աշխատութիւն և ջանք, որ ուղղված է ժողովրդի տնտեսական բարեկեցութեան, սիրելի և գնահատելի է խմբագրութեանս համար։

Ուստի և «Լումայի» խմբագրութիւնը սրանով շնորհաւորում է Ձեզ, յարգելի պարոն, Ձեր գիւղատնտեսական 30-ամեայ գործունէութիւնը և մաղթում է Ձեզ յարատևել այդ ասպարէզում երկար տարիներ։

Գիւտ աւ.-ք. Աղանեան

Թիֆլիս, 21 նոյեմբերի

—

(Նամակով)

Մեծարգոյ բարեկամ պարոն Ալեքսանդր.

Շատ ցաւում եմ, որ անձամբ և գրչով չեմ կարող մասնակցել Ձեր յոբելեանական մեծ հանդէսին։

Թող գիտակից մասնագէտների մասսան, տեսնելով Ձեր երեսնամեայ բեղմնաւոր գործունէութիւնը, խրախուսված Ձեր օրինակելի գործունէութեամբ, աւելի եռանդով լցված, տարածէ Ձեր սիրած և փայփայած գաղափարները մեր բազմատանջ ժողովրդի մէջ։

Իմ տենչանքն է, որ Ձեր սիրած գաղափարը՝ դէպի մայրենի հողն ունեցած սէրը՝ մարմնանայ և գործ դառնայ։

Թող մեր սիրած երկրի կրծքի մէջ մօտ ապագայում ծաղկեն գիւղատնտեսական մշտական դասընթացքներ և դպրոցներ, իսկ մեր օրերը գոնէ մի միջնակարգ եռամեայ գիւղատնտեսական ուսուցչանոց։

Ձեզ յայտնի է, որ ես այդ գաղափարն աշխատում եմ տարածել ամեն տեղ թէ խօսքով, թէ մասնաւոր նամակներով և թէ յօդուածներով։ Ձեզ նոյնպէս յայտնի է, որ այդ առիթով խոստումներ են եղել և պէտք է յուսանք, որ շուտով կիրականանան։

Ես համոզված եմ, որ Ձեր անուան հեղինակութիւնը աւելի կը դիւրացնէ այդ գործի իրականացումը։

Ցանկանում եմ Ձեզ աւելի տոկուն և եռանդով երկար տարիների բեղմնաւոր գործունէութիւն։ Յարգանքներով՝

Բժ. Ա. Բուզուղեան

Պետերբուրգ, 15 նոյեմբերի

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Երկուշաբթի, նոյեմբերի 23-ին, կայացած նիստում, քաղաքագլխի պաշտօնակատար Ալ. Խատիսեան զեկուցեց, թէ կիրակի, նոյեմբերի 22-ին, Կովկասի Փոխարքայի օգնական սենատոր Վասացին, ուղեկցութեամբ Թիֆլիսի նահանգապետի, Փոխարքայի խորհրդի անդամ Զուևկովսկու, նահանգական ատեանի անդամների, ուպրավայի անդամների և ջրանցքային շինութիւնների ծառայողների այցելեց այդ շինութիւնները Աւճալայում, այն է՝ ջրանցքների կայարանները, բանւորների բնակարանները, դպրոցը, մեքենաները և այլն։ Քննութիւնից յետոյ սենատոր Վասացին յայտնեց իր գոհունակութիւնը։ Ապա նրան տրվեց նախաճաշ, որից յետոյ վերադարձաւ քաղաք ժամը 5-ին։

Այս զեկուցումը լսելուց յետոյ դուման դիմեց իր հերթական զբաղմունքներին։ Նա հաստատեց 1800 ր. ծախքը, որ արել էր ուպրավան հանգուցեալ Ա. Մանթաշեանի թաղման վրա, յատկացրեց տարեկան 100 ր. նպաստ հայոց Որբախնամ Ընկերութեան, որ դիմել էր խնդրագրով, յատկացրեց 500 ր. Մանուկների Խնամատար Ընկերութեան. դրանից յետոյ ձեռնարկեց Թիֆլիս քաղաքի 1910 թ. համար կազմված ելևմտական նախագծի քննութեանը և որոշեց շաբաթը երկու անգամ նիստ ունենալ, երկուշաբթի և հինգշաբթի, յատկացնելով վերջին օրը այդ նախահաշւի քննութեանը։ Նիստի վերջում կատարվեցին դպրոցական, իրաւագիտական և հողային յանձնաժողովների անդամների ընտրութիւնները գաղտնի քուէարկութեամբ։

ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԻԱՒՈՐՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՉԸ

Ազգութիւնների միաւորման ընկերութեան խորհրդի նիստում հաւանութիւն է տացել հետևեալ կոչը, որով ընկ. դիմում է Պետական Խորհրդի և Դումայի անդամներին, հասարակական գործիչներին.

«Ռուսաստանի ազգութիւնների միաւորման ընկերութիւնը նպատակ ունի աջակցելու ռուսաց պետութեան մէջ բնակվող բոլոր ազգերի փոխադարձ մերձման։ Ընկ. հիմնադրողները խորապէս համոզված են, որ մեր պետութեան կազմի մէջ մտնող բազմաթիւ ազգութիւններ ոչ միայն պարտաւոր են, այլ և կարող են հաշտ, խաղաղ ապրել իրար հետ։ Եւ եթէ Ռուսաստանի զանազան մասերում երևում է ազգայնական թշնամութիւն, այն էլ երբեմն շատ տխուր ձևերով, ապա դրա պատճառները եղել են ազգութիւնների արհեստական, յաճախ և բռնի մեկուսացումները մէկը միւսից։ Քաղաքական ճգնաժամերի միջոցին այդ հողի վրա բոլոր երկիրներում առաջացել են ծանր բարդութիւններ։ Այդպիսի երևոյթներ վերացնել կարելի է միայն մի պայմանով, որ հոգատար և ուշադիր վերաբերմունք ցոյց տրվի ամեն մի ազգութեան կարիքներին, նկատելով ազգութիւնը իբրև մի ինքնահեծան ամբողջութիւն։ Նոյնը և ազգութիւնների փոխադարձ յարաբերութեանց վերաբերեալ, քանի որ ամեն մէկի տնտեսական և իրաւական զարգացումը սերտ կապված է ամբողջ ժողովրդի ընդհանուր զարգացման հետ։

«Ազգութիւնների միաւորման ընկ. յոյս ունի հնարաւորութիւն ստեղծել ազգութիւնների խելացի փոխադարձ յարաբերութիւնների համար, ուսումնասիրելով պետութեան մէջ բնակվող ազգութիւնների պատմութիւնը, կենցաղը, ազգայնական հարցերը։ Խայտաբղէտ ազգութիւններից կազմված պետութիւնները պարտաւոր են ձգտել բոլոր ժողովրդի սերտ մերձեցմանը պահպանելով իրաւունքը և օտարի շահերի յարգանքը։ Այն կապը, որ պահպանվում է ույժի գերիշխանութեամբ, չէ կարող յարատև լինել և տանում է դէպի պետութեան կազմալուծումը։ Ազգութիւնների միաւորման ընկ. ձգտում է արծարծելու հասարակական այն գիտակցութիւնը, երբ ամեն մէկը իրան զգում է ռուս քաղաքացի, և համոզված է որ ընդհանուր պետական և իր ազգութեան շահերը ներդաշնակ են։ Ծառայել այդպիսի մի գիտակցութեան մշակման և ամրապնդման, քանդելով նախապաշարմունքները, լուսաբանել հասարակութեան և օրէնսդրական հաստատութիւններում առաջացած հարցերը, աջակցելով Ռուսաստանի բոլոր ազգութիւնների մէջ համերաշխութիւն ստեղծելուն, հետամուտ լինելով միայն կուլտուրական նպատակների,—ահա ինչի մէջ է տեսնում իր գործունէութեան նպատակը մեր ընկերութիւնը։ Մնալով անկուսակցական և չը ծածկելով մեզանից առաջադրած խնդիրների դժուարութիւնը, ընկերութիւնս յոյս ունի նրանց համակրանքին և աջակցութեանը, որոնք ձգտում են պետութեան միութեան ամրապնդման, միութեան, որ հիմք ունի կատարեալ յարգանք դէպի ամեն ազգութիւնների անհատական առանձնայատկութիւնները»։

Գ. Ա. ԿԱԶԱՉԵՆԿՕՅԻ 35-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Նոյեմբերի 28-ին Պետերբուրգի կօնսերվատորիայի մեծ դահլիճում կատարվելու է ռուս կոմպօզիտոր և դաշնակահար Գ. Կազաչենկօյի 35-ամեայ երաժշտական գործունէութեան և կայսերական (Մարինսկի) օպերայում ծառայութեան 25-ամեայ յոբելեանը։

Նա ունի մի շարք գրուածքներ, որոնք մեծ աջողութեամբ դրվել են զանազան սիմֆօնիական և այլն երաժշտական երեկոյթներին. Նրա «Կնեազ Սերեբրեանի», «Պան-սոտնիկ» օպերաները, նոյնպէս և մի քանի սիմֆօնիաներն ու խմբական երգերը օրկեստրի հետ, ռոմանսներն և այլ բազմաթիւ երաժշտական գրուածքները արդէն մի գրաւական են նրա լուրջ և բազմակողմանի երաժշտական հանճարի։

Գ. Կազաչենկօյի անունը վաղուց արդէն յայտնի է և հայ հասարակութեան։ 80-ական թւականներից ճանապարհորդելով Կովկաս և ուսումնասիրելով հայկական երգերն ու մելօդրամները, նա գրել է մի շարք ռոմանսներ, քառաձայն երգեր օրկեստրի հետ և նոյնիսկ սուիտաներ, նիւթ առնելով հայկական երգերից։

Նրա 2 սուիտաները, I և II—„Армянскіе суиты“ (Гайканскіе напивы) վերնագրով, մեծ աջողութիւն են ունեցել զանազան սիմֆօնիական երեկոյթներին։ Այդ սուիտաները դրվել են նոյնիսկ Պարիզում 1898 թ.։

Դա օտարազգի երաժիշտներից գրեթէ միակն է, որը լուրջ կերպով ուսումնասիրելով մեր ազգային երգերն ու մելօդիաները՝ զուտ երաժշտական գործերի է վերածել և, ի ցոյց դնելով օտարազգի հասարակութեան առաջ, ծանօթացրել է մեր ազգային երաժշտութեան հետ։

Կազաչենկօն 1891 թւին մասնակցել է Պետերբուրգի ուսանողական հայկական երեկոյթներին իր երգեցիկ խմբով ու նուագախմբով։ Նրա երգեցիկ խմբերը օրկեստրի հետ, ինչպէս՝ «Զէյթունցոց մարշը», «Սասունի մարշը», «Մեր գործերը», «Ջան հայ աղջիկ» և «Հայ մեռնենք» սեփական օրանժիրովկաները առանձին սիրով և ոգևորութեամբ է լսել տեղական հայ հասարակութիւնը։ Ունի նաև 38-ի չափ խմբական երգեր, ինչպէս՝ «Ջայնը հնչեց», «Ջան գիւլում», «Շուշանիկի երգը», «Որ մահկանացուն», «Խանում Եւա», «Շողեր Ջան», «Ջարթիր սիրտ իմ», «Հով արէք սարեր ջան» և այլն և այլն, և բացի այդ, բաւականին թւով գրուածքներ դաշնամուրի և այլ հայկական սօլոյի երգեր ու ռոմանսներ։

Պէտք է յիշել, որ Գ. Կազաչենկօն լինելով մեր ազգակից երաժիշտ Մ. Եկմալեանի աւագ ընկերներից, բաւականին աշխատակցել է հայ քառաձայն պատարագի գրութեան գործում։

Աչքի առաջ ունենալով դրա սէրը և համակրանքը դէպի հայ երաժշտութիւնն ու բեղմնաւոր աշխատանքը մեր անկատար և թոյլ գեղարուեստի ասպարիզում, արժանի է հայ հասարակութեան արժանավայել համակրանքին։

Հայ հասարակութիւնն իր կողմից պիտի տօնէ նրա գործունէութեան յոբելեանը աւելի մեծ սիրով, քանի որ նրա գործունէութեան մեծ մասը նուիրված է եղել հայկական երաժշտութեան։ Ցանկալի է նաև նրա գրուածքների հաւաքածուն հրատարակված տեսնել, որը մի թանգագին գանձ կը լինի մեր ազգային գեղարուեստի համար։

Յոբելեանի առիթով նրա անունով հասցէներն ու հեռագրերը կընդունվեն կոմիտէի նախագահի անունով—С.-Петербургъ, Англинская Набережная, № 62. Флорѣ Мартыновнѣ Пропперъ.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Հեռագրով)

20-րդ նիստը բացվում է իշխան Վոլկոնսկու նախագահութեամբ։

Նախագահը կարդում է երկու յայտարարութիւններ, որոնցից մինը՝ 31 անդամների ստորագրութեամբ առաջարկում է անձի անձեռնմխելիութեան օրինագիծը յանձնել նոր քննութեան համար ըստ էութեան դատական մասնաժողովին, միւսը՝ առաջադիմականների խմբակի և ժողովրդական ազատութեան ֆրակցիայի կողմից՝ առաջարկում է յանձնել 22 անդամից բաղկացած մասնաժողովի վերամշակութեան և Դումային մի ամսից յետոյ զեկուցանելու համար։

Հերթից դուրս զեկուցանողը առարկում է ձախակողմեան և կենտրոնի հռետորներին։

Մարկով 2-րդը մատնանիշ է անում, որ նախագիծը բոլորովին չը պէտք է տալ մանաժողովի և դրան առհասարակ բոլորովին հարկաւորութիւն չը կայ, որովհետև ռուս ժողովուրդը, իբրև մի մասսա, կարիք չունի, որպէս զի անձի անձեռնմխելիութիւնը ապահովվի աւելի շատ, քան այժմս է։ Այդպիսի անձեռնմխելիութիւն ուզում են Ռուսաստանի և ռուսաց պետութեան թշնամի այլազգիները, գլուխ ունենալով յուդայականների տաղանդաւոր ցեղին, ապա լիբերալ-մասսօն ինտելիգենցիային, որ Ռուսաստանին տանում է դէպի հանրապետութիւն, սօցիալիստներին և անիշխանականներին, որոնք երազում են ընդհանուր կողոպուտի և բոլորին կոտորելու մասին (ձայներ ձախից. «Լաւ կը լինէր մի բան գիտենայիք սօցիալիզմից»)։ Այդ պատճառով հռետորը չէ զարմանում, որ՝ դեռ չը խօսած անձի անձեռնմխելիութեան մասին՝ այնպէս կրակոտ խօսեցին ֆրանսիական մեծ յեղափոխութեան մասին և այդ ամօթալի ու պժգալի բանը անուանեցին մեծ։ Իրերի այդ դրութեամբ՝ զարմանալի չէ, որ Նախագիծը մանաժողովին յանձնելուն կողմնակից են աթոռները չարախընդութեամբ կրճատացնող սօցիալ-աւազակները։

Գեգեչկորի.—Ինքդ ես աւազակը։

Մարկօվ.—Ես չեմ խօսում Դումայի արժանայարգ անդամների մասին։ Յանձնելուն կողմնակից են նաև սատանայապատկեր և կակազ հրէաները, բացառութեամբ Դումայի պատւարժան անդամների, և Նախիջևանի ճարպիկ հաչողները։

Աջէմեանը՝ տեղից.—Լիրբ, դա լրբութիւն է (աղմուկը ձախից ուժեղանում է. լըսվում են առանձնակի բացագանչութիւններ)։

Նախագահը զանգահարում է և խնդրում հանգիստ լինել (ձայներ ձախից. «Նա վիրաւորում է»)։

Աջէմեանը տեղից.—Ես թոյլ չեմ տայ վիրաւորել ինձ. այ քեզ լրբութիւն (աղմուկը ձախից սաստկանում է)։

Նախագահը զանգահարում է և առաջարկում Մարկօվ 2-րդին կարգին լինել (ձայներ ձախից. «Ոչ, թող ներողութիւն խնդրէ, թող իր խօսքերը յետ վերցնէ»)։

Նախագահ.—Ձեր գործը չէ նկատողութիւններ անել. այդ իմ պարտականութիւնն է։

Մարկօվ 2-րդ.—Ես չեմ աշխատի գըրգռել Դումայի զգայուն անդամների կենդանի ուշադրութիւնը, բայց խնդրում եմ Նախագահից չը հաշւել այն րօպէները, որ ես պէտք է լռեմ, լսելով աղաղակները։

Նախագահ.—Դա իմ գործն է։ Խնդրում եմ ձեզ խօսել հարցի մասին։

Մարկօվը մատնանշում է, որ առաջադէմ հոգևորականները նոյնպէս յիշատակեցին ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը, և բանը վերջացաւ նրանով, որ ինքը Պետերբուրգի համալսարանի պրօֆէսօր Դըմշան ամեն կերպ ջատագովեց յեղափոխութիւնը։

Նախագահը ընդհատում է հռետորին և խնդրում է նրան զգոյշ լինել իր խօսքերի մէջ, նախազգուշացնելով որ երրորդ նկատողութեան դէպքում կը զրկէ նրան խօսքից։

Պուրիշկեվիչը տեղից.—Իսկ Րօդիչէվն ինչ էր խօսում։

Նախագահը Պուրիշկեվիչին կարգի է հրաւիրում (ձայն աջից. «Իսկ յեղափոխութեան մասին կարելի՞ է խօսել»)։

Մարկօվը շարունակում է.—Երբ այս ամբիօնից ատեստացիաներ տուեցին ռուս ժողովրդին և նրան անուանեցին անազնիւ և ստախօս, ոչ ոք այն ժամանակ չէր կանգնեցնում աղմուկով և բացագանչութեամբ. իսկ երբ տրվում են ատեստացիաներ ռուս ժողովրդին վիրաւորողներին, նրանց խանգարում են խօսել։ Ես յենվում եմ ռուս ժողովրդին» (աջից բացագ. «բրաւօ»)։

Մարկօվը այնուհետև ասում է, որ օրինագիծը մանաժողովին յանձնելու կողմնակից են միայն չորս հռետորներ. բոլորն էլ ի հարկէ այլազգիներ են՝ յուդայական Ֆրիդմանը, լեհ Դըմշան, հայ Աջէմեանը և վեսեգօնեցի Րօդիչէվը (ծիծաղ աջից, աղմուկ ձախից)։

Կադէտների մեծ մասը, աշխատաւորականները և մի քանի առաջադիմականներ կանգնում են և դիմում են դէպի մուտքը. դահլիճում աղմուկ է։

Կարաուլօվը, հեռանալով, նկատում է.—Ես մեկիտանխանայում սովոր չեմ նստել։

Նախագահը զանգահարում է։

Մարկօվը հեռացողների յետևից ասում է, որ նրանց լսել չարժէ։

Պուրիշկեվիչը տեղից.—Մարկօվ, ձեզ լսում է Ռուսաստանը, և ոչ թէ հայերը։

Մարկօվ 2-րդը կանգ է առնում Ֆրիդմանի ճառի վրա, ապա դիմում է Դըմշայի ճառի քննադատութեանը և ասում է, որ Ռուսաստանում անմեղ մարդկանց, ինչպէս այդ պնդում էր Դըմշան, բանտերում չեն նստեցնում, և անթոյլատրելի է, որպէսզի պրօֆէսօրները անբարոյականացնեն երիտասարդ ուսանողութեանը և իրանց կուսակցական-ազգային գործերում լարեն նրան ռուսաց կառավարութեան դէմ (աղմուկ. ձայներ՝ «Գործին»)։

Նախագահը կանգնեցնում է հռետորին և խնդրում է կրկնել իր ասածը։

Մարկօվը պարզում է իր միտքը և ասում է, որ կանգնէ այլազգի Աջէմեանի ճառին։

Նախագահը խնդրում է չը վիրաւորել այլազգիներին։

Մարկօվը բացատրում է, որ նկատի ունի միայն այն այլազգիներին, որոնք բացարձակ թշնամի են ռուս ժողովրդին, և երբէք թոյլ չի տայ իրան մատնանիշ անել զոր օրինակ գերմանացիների վրա։

Նախագահը դարձեալ խնդրում է խօսել ըստ էութեան։

Մարկօվ 2-րդը մատնանշում է, որ Աջէմեանը առաջարկեց դուրս ձգել հին բալաստը ռուսական պետականութիւնից, այսինքն օրէնքների ժողովածուի 16 հատորը։ «Սակայն նաւաստիները,—ասում է հռետորը,—գիտեն, որ եթէ դուրս ձգեն բալաստները արքունական նաւից յեղափոխութեան փոթորկի ժամանակ, նաւը գլխիվայր շուռ կը գայ։ Գուցէ և դա է այլազգիների տենչանքը»։

Ֆօն-Անրէպը յայտնում է, որ ներկայ նախագծի քննութեան ժամանակ պէտք էր սպասել այնպիսի լուրջ ճառեր, ինչպէս լուրջ է ինքը օրինագիծը. հետևաբար պէտք էր սպասել, որ ամբիօն բարձրացող մարդիկ սրբութեամբ կը յարգեն Դումային տրված իրաւունքները (ծափ. ձախից և կենտրոնում. ձայներ աջից. «Գործին»)։ «Մենք դաստիարակողներ չենք ուզում» (ուժեղ աղմուկ, խլացուցիչ աղաղակներ)։

Նախագահը երկար զանգահարելուց յետոյ.—Այստեղ Դումա է. խոնարհաբար խնդրում եմ այստեղ չը բղաւել։ Ուրիշ դարձուածք, լսելով այս աղաղակները, ես ասել չեմ կարող։

Վեազիգինը տեղից.—Խոնարհաբար խընդրում եմ Դումայի անդամների վրա չը բղաւել։

Նախ.—Դումայի անդամների վրա բղաւել ես ինձ թոյլ չեմ տայ, բայց այստեղ այնպիսի աղմուկ է կանգնած, որ ես ակամայից պէտք է խօսեմ ամբողջ ձայնովս, որպէս զի ինձ լսեն։ Իսկ ձեզ, նրա համար՝ որ թոյլ տուիք ձեզ նկատողութիւն անել Նախագահին, կարգի եմ հրաւիրում (բուռն ծափ. ձախից)։

Ֆօն-Անրէպը, շարունակելով, խօսում է այն դժուարութիւնների մասին, երբ պէտք է պահպանել օբեկտիվիզմը մի խումբ մարդկանց դէմ, որոնք ջանում են ամեն կերպ հարցը մթնացնել։ «Այս դէպքում մենք դէմ առ դէմ կանգնած ենք քաղաքական պրօպագանդայի հանդէպ. այստեղ մենք տեսնում ենք կատաղի կռիւ առանձին կուսակցութիւնների և ազգութիւնների միջև։ Զամըսլօվսկու և Մարկօվի ճառերից յետոյ յայտնի դարձաւ, որ ոչինչ օգտակար բան անկարելի է սպասել։ Այդ պատճառով հոկտ. 17-ի միութիւնը առաջարկում է օրինագիծն յանձնել դատական բարենորոգումների մասնաժողովին» (ծափ. կենտրոնում և ձախից)։

Պուրիշկեվիչը իրան յատուկ ձևերով պաշտպանում է հին մանաժողովին և ասում է, որ առաջարկութիւն անողները առաջնորդվում են կուսակցական տենդենցներով։ Վերջում նա ասում է. «Եթէ Դուման պետական գործերում սկսում է առաջ մղել իր կուսակցական հաշիւները, այն ժամանակ ես իրաւունք ունեմ բացագանչել՝ «Հայրենիքը վտանգի մէջ է, և աւելի լաւ է, որ Դուման այդպիսի կազմով չը լինի» (աղմկալի ծափեր աջից)։

Գեգեչկորին յայտնում է, որ սօցիալ-դեմօկրատները, մասսաների ինքնագիտակցութիւնը զարգացնելու և ցոյց տալու համար, որ 3-րդ Դումայից լայն բարենորոգումների գործադրութիւն անհնարին է սպասել, ձայն կը տան յօգուտ օրինագիծը մանաժողովին յանձնելուն։

Եւլօգի արքեպիսկոպոսը ասում է, որ նացիօնալիստների ֆրակցիան նոյնպէս յօգուտ յանձնելուն ձայն կը տայ։

Քուէարկութիւն. 204 ձայնով ընդդէմ 113-ի օրինագիծը յանձնվում է 22 հոգուց բաղկացած յատուկ մանաժողովի մի ամիս ժամանակով։

Այնուհետև Դուման որոշում է հինգ տարւայ ընթացքում 10,000 րուբլի նպաստ տալ Միջին և Արևելեան-Ասիան ուսումնասիրող յանձնաժողովին։ (Հ. Գ.)

ՅՕԳՈՒՏ ԱԴԱՆԱՑԻՆԵՐԻ

Ստացանք.—1) Թիֆլիսում, տ. Ն Մելիքեանից՝ 2 ր., 2) Բագուից, Յ. Խօջամիրեանից, «Վանգոյժի» վաճառումից՝ 3 ր. 75 կ. (տես առանձին նամակ), 3) Բագուից, Գրիգոր Պօպօվեանից՝ 10 ր.։

(Կոչ Գ. Չալխուշեանի)

Ստացանք.—1) Մօսկվայից, Սօնիկից և Աքելից՝ 10 ր., 2) Սուխումից, Մանենից և Կարէնից՝ 4 ր., 3) Սօս գիւղից (Վարանդա) 1 ր. 5 կ., 4) Թիֆլիսում, Ներաշէնի ծխ. դպրոցի աշակերտուհիներից՝ 5 ր. 83 կ.։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Երէկ, նոյեմբերի 24-ին, ժամը 3-ին Ա. Քալանթարի համար Փոխարքայի մօտ նշանակված էր ընդունելութիւն։ Փոխարքան շնորհաւորեց յոբելեանը և ցաւ յայտնեց, որ նա անկարող է եղել այցելել ընկերութիւնը և ներկայ լինել կաթնատնտեսական, մեղուաբուծական և թռչնապահական ցուցահանդէսներին։ Այնուհետև Ա. Քալանթար ներկայացաւ կոմսուհուն և յայտնեց շնորհակալութիւն նրա ուղարկած շնորհաւորութեան ողջոյնի համար։ Կոմսուհին յայտնում է, որ օգտվում է դէպքից նորից անձամբ շնորհաւորելու։ Ա. Քալանթարի 30-ամեայ գործունէութեան յոբելեանը և ուրախ է, որ տօնակատարութիւնը անցել է շքեղ և սրտագին։

◆ Մեզ հաղորդում են, որ կիրակի, նոյեմբերի 22-ին, Գայիանեան դպրոցի դահլիճում կայացաւ Մողնու ծխականների ընդհանուր ժողով, մասնակցութեամբ մօտ 30 ծխականների և նախագահութեամբ Կ. Եաղուբեանի։ Ծխական ժողովը քննեց հոգաբարձութեան առաջարկը՝ թոյլ տալ 3000 րուբլի փող փոխարինաբար վերցնել Մողնու եկեղեցուն պատկանող գումարից, դըպրոցի շէնքի աւարտման համար, և որոշեց տալ հոգաբարձութեան այդ թոյլտուութիւնը։ Միևնոյն ժամանակ ժողովը ընտրեց մի հանգանակիչ մասնաժողով, բաղկացած Ե. Ծատուրեանից, տէր Սահակ քահանայից, Գ. Կաֆեանից, Ա. Թադէոսեանից և Կ. Եաղուբեանից, հանգանակելու դրամ դպրոցի շինութեան համար։

◆ Մեզ խնդրում են տեղեկութիւն տալ այն մասին, որ Թիֆլիսի Մետեխի բանտում բանտարկված հայերը մեծ կարիք են զգում հայերէն գրքերի։ Բանտի գրադարանը հարուստ է ռուս գրքերով, վրացիների համար կան նոյնպէս քիչ թէ շատ գրքեր, մինչդեռ հայերը համարեա բոլորովին զրկված են հայերէն գրքերից։ Այդ պատճառով հրաւէր ենք կարդում բոլոր նրանց, որոնց սրտին մօտ է բանտարկեալի վիճակը, նուիրաբերութիւններ անել զանազան հայերէն գրքերով, որ կարելի է ուղղել բանտային վարչութեան անդամ Ալ. Խատիսեանին։ «Մշակի» խմբագրութիւնը իր ստացած գրուածքներից որոշ մաս կը նուիրէ վերոյիշեալ նպատակին։

◆ Անցեալ օրը Կովկասի Փոխարքայի պալատում տեղի ունեցաւ կոմսուհի Վօրոնցօվա-Դաշկօվայի նախագահութեամբ Թիֆլիսում բժշկական շտապփոյթ օգնութիւն հասցնելու խնդրով զբաղվող յատուկ յանձնաժողովի նիստը։ Յանձնաժողովին տեղեկութիւն տրվեց, որ Թիֆլիսի քաղաքային դուման ցանկութիւն է յայտնել այդ գործը կենտրոնացնել քաղաքային վարչութեան կից։ Յանձնաժողովի ձեռքի տակ ներկայումս կայ մօտ 7800 րուբլի։ Յանձնաժողովը ցանկութիւն յայտնեց ժողոված փողերով գնել աւտօմօբիլ-կառք՝ արագ օգնութեան համար և տալ քաղաքի տնօրէնութեանը։ Ապա ընտրվեց մի բիւրօ յետագայ գործողութիւնների համար։ Ընտրվեցին Միլօվ, իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկ, բժ. Կ. Ստեփանեան, Տ. Կիկօձէ, Ա. Գուրկօ և Վաչնաձէ։ Յանձնաժողովի կազմը լրացնելու համար ընտրվեցին դարձեալ կոմսուհի Վօրօնցօվա-Դաշկօվա, տ. Վատացի, իշխանուհի Մ. Թումանեան, Պուշչին, Միլօվ և Վեսելօվզօրօվ։

◆ Նոյեմբերի 21-ին Կովկասի Փոխարքայի օգնական սենատոր Վատացին այցելեց զինուորա-պատմական թանգարանը, ուր մանրամասն բացատրութիւններ տուեց բոլոր հնութիւնների և յիշատակարանների մասին Վ. Պօտտօն։

◆ Դուշէթի և Գօրու գաւառների մի քանի մասերում վերջին ժամանակներս երևացել են մեծ քանակութեամբ դաշտամկներ, որոնք անհագին վնասներ են հասցնում։

◆ Օգիւստ Գիւօն Թիֆլիս կը գայ մի քանի փորձեր անելու նպատակով գալիք տարւայ սկիզբներին։

◆ Կոյրերի խնամատար ընկերութեան հոգաբարձութիւնը խնդրում է մեզ տպագրել. «Հանգուցեալ Եգոր Զոհրաբեանի կտակակատարներ Համբարձում Առաքելեան և Մ. Սուլխանեան, ի կատարումն հանգուցեալի կամքի, ներկայացրին հոգաբարձութեան նախագահ կոմսուհի Ելիսավետա Անդրէևնա Վօրօնցօվա-Դաշկօվային 960 րուբլի 14 կոպէկ, որ կտակել էր հանգուցեալ Զոհրաբեանը կոյրերի խնամատար հոգաբարձութեանը, որի համար խորհուրդը յայտնել է նրանց ամենաանկեղծ շնորհակալութիւն»։

◆ Թիֆլիսի ժողովարանի անդամների ընդհանուր ժողովում, բուռն վիճաբանութիւններից յետոյ, ընդունվել է դարձեալ 15,000 րուբլի բաց թողնել ի լրացումն այն 42,000 րուբլու, որ ծախսվեց ժողովարանի նոր շէնքի կառուցման վրա։

◆ Վաղը, ի պատիւ Շիլլերի ծննդեան 150-ամեակի, վրաց թատրոնում կը խաղացվի «Աւազակները»։ Ներկայացումից առաջ Գոմարթէլին ռեֆերատ կը կարդայ Շիլլերի մասին։

◆ Անդրկովկասի բազմաթիւ տեղերից տեղեկութիւններ են ստացվում վրաց դրամատիկական ընկերութեան վարչութեան անունով Գաբունիա-Ցագարելու յօբելեանին մասնակցելու առիթով։ Յօբելեանին մասնակցելու որոշումներ կայացրել են նաև Թիֆլիսում Զուբալօվի ժողովրդական տան թատերասէրների բոլոր սեկցիաները, Հալաբարի «Նոր-Դրամա» ընկերութիւնը, վրաց սիրողների խումբը և այլն։

◆ Շուտով Թիֆլիսում հրատարակվելու է վրացերէն մի շաբաթաթերթ «Ալամի» (Դրօշակ) անունով երդ.-հաւ. Գ. Դիասամիձէի խմբագրութեամբ։ («Յ.»)

◆ Նոյեմբերի 23-ին 2-րդ քաղաքամասի ոստիկանները ձերբակալել են գաղախեցի Ղահրաման Դաւթեանին, որ մեղադրվում է բազմաթիւ յանցանքների մէջ։

◆ Հնարաւոր է գտնված՝ տաւարի մսի ֆունտը աւելացնել 1 կոպէկով, այսինքն դարձնել 11 կոպէկ։

◆ Քութայիսում իշխանութեան կարգադրութեամբ փակվել է վրաց «Կոլխվալի» օրաթերթը։

◆ Պետերբուրգից «Դրօէբա» թերթին հեռագրում են հաւաստի աղբիւրներից. «Լըսվում է, որ Կիրիօն (վրացի) եպիսկոպոսին նշանակվում է կենսաթոշակ և կը լինի մի որևէ վանքի վանահայր. սակայն յայտնի չէ, թէ այդ երբ կիրականանայ»։

◆ Պետական Դումայի անդամ Շէրվաշիձէն Սուխումից ստացել է հետևեալ հեռագիրը. «Վաղուց է, որ հաստատվել ենք Օչամչիրի պետական անտառներում՝ 59 ընտանիք 400 հոգով. պայմանի համաձայն մաքրեցինք տեղը, կտրատեցինք անտառը, արմատախիլ արինք կոճղները և տեղը յարմարեցրինք վարուցանքսի համար։ Հաստատեցինք, շինեցինք գիւղեր, տնկեցինք այգիներ և բանջարանոցներ։ Այժմ առանց պատճառը յայտնելու դուրս են անում մեզ մեր բնակութիւնից, մնում ենք առանց տեղի, քարուքանդ եղած։ Աղերսում ենք, միջնորդեցէք, որ շուտով դադարեցնեն մեզ վռնտելը, որը նշանակված է նոյեմբերի 16-ին։ Խնդրում ենք քննութիւն նշանակվի այս ահաւոր անարդարութեան համար»։ Ստորագրել են 59 ընտանիքների 409 անդամներ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Կիրակի, հոկտեմբերի 22-ին, վրաց դերասանական խումբը խաղաց «Պատարա Կախի» (Փոքրիկ կախեթցին) պատմական 5 գործ. դրաման, որը բանաստեղծ Ակակի Ծերեթելիի բեղմնաւոր գրչի արդիւնքն է։ Նիւթը վերցված է Վրաստանի վերջին արքայի՝ Հէրակլ II-ի պատանեկութեան ժամանակներից, երբ մի կողմից Վրաստանը ցցված լինելով անկոչ հիւրերով՝ պարսիկներով, իսկ միւս կողմից լեզգիներով, Հէրակլի հօր՝ Թէյմուրազի հիւանդութեան պատճառով, նա մի խումբ հայրենասէր իշխանների ու գիւղական մեծաւորների հետ միացած, փոքրաթիւ զօրքով, յարձակվում է թշնամիների վրա Ալազանի ափերի մօտ և յաղթելով ի փախուստ է դարձնում նրանց։

Սակայն այդ կռւում կորցնում է իր ամենալաւ զինակցին՝ Րէվազին, որը սիրահարված է լինում մի հասարակ, բայց հայրենասէր գեղջկուհի աղջկայ վրա։

Կռւի ամբողջ ընթացքում, աղջիկը գիւղացու հագուստ հագած, շարունակ հետապնդում է իր սիրելուն՝ Րէվազին և կռիւը վերջանալուց յետոյ, երբ տեղեկանում է, որ սիրեկանը սպանված է, գալիս է նրա դիակի մօտ և, ծնկաչոք, վերադարձնում է հանգուցեալ Րէվազին սիրոյ առհաւատչեան՝ բեհեզի մի թելը, ասելով «Մենք այս աշխարհում չը կարողացանք հասնել մեր նպատակին շնորհիւ բռնակալների նիւթած դաւերի, սակայն ըստ չափու կարողութեան կատարեցինք մեր պարտքը, հանդէպ բազմատանջ հայրենիքի։

«Արդ, գնանք այն աշխարհը միասին, ուր բռնակալները չեն կարող մխել իրանց անարգ ձեռքը և խանգարել մեզ՝ մեր նպատակին հասնելու համար»։

Այս խօսքերը արտասանելուց յետոյ ընկնում է հայրենասէր օրիորդը ու մեռնում։

Պիէսը շատ յուզիչ տեսարաններ է պարունակում իր մէջ և գրված է ոտանաւորի ձևով, զուրկ լինելով սակայն բեմական էֆֆէկտներից։

Դերակատարները շատ աջող կերպով տարան իրանց դերերը և առանձնապէս փայլեցին այդ գիշեր։ Նկատվում էր, որ ջանք չէին խնայել կարողացածին չափ լաւ իւրացնելու իրանց դերերը։ Անկարելի է չը նկատել, որ միջարարները շատ երկար ու տաղտկալի էին։ Պիէսը բեմականութեան և դեկօրացիաների կողմից աջող էր։

Յ. Գաս—եան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 14 նոյեմբերի

Պարսկաստանը, ըստ երևոյթին, ձեռք է բերել արդէն քաղաքական ազատութիւն՝ երկու տարւայ յեղափոխական ընդհարումներից ու արիւնհեղութիւններից յետոյ։ Նոր պարլամենտը բացվեց. կատարվեցին շքեղ հանդէսներ, տօներ, շնորհաւորութիւններ, թնդանօթաձգութիւն, հրավառութիւններ ու քէֆեր ամեն տեղ։ Բայց ինչպէս երկիրն ստացե՞լ է իրական ազատութիւն. կա՞ն անդորրութիւն, ապահովութիւն, պատւի ու գոյքի անձեռնմխելիութիւն. իրագործվո՞ւմ են ռէֆօրմներ։ Ի՞նչ են ներկայացնում այսօր ժողովրդի տնտեսական կացութիւնը, վաճառականութիւնը և կրթական ու կուլտուրական կեանքն ընդհանրապէս։ Պէտք է ասենք, որ դրանք կան ու կը մնան լուծելի հարցեր։ Այս րօպէիս լուրջ է, շատ լուրջ է ընդհանուր Պարսկաստանի դրութիւնը. լուրջ են և՛ այն հարցերը, որոնք դէմ յանդիման կանգնել են մէջլիսին, երկրի գործող մարմիններին։

Դեռ ևս շատ հեռու չերթանք։ Վերցնենք դիցուք մեր քթի տակ եղող Ատրպատականը իր սահմանային գծերով։ Ո՞րպիսի արհաւիրքների պատկեր է ներկայացնում առանց այն էլ արիւնաքամ, տարուլներից ծծված, վերջին տարիներին տիրող հանգամանքների պատճառով դուրս պրծած աւազակ-բոբենիների ճիրաններում կմախք դարձած այս երկիրը։ Տեսէք. ո՞ւմ յայտնի չեն Արդաբիլում տեղի ունեցած սարսափները շահսեվան հրոսակախմբերի և իրանց արժանաւոր զինակից Րահիմ խանի հորդաների ձեռքով՝ հուր, սուր, ալան-թալան՝ ասեղ չը թողնելու պայմանով. բռնաբարութիւն կանանց, աղջիկների առևանգութիւն։ Անգամ ռուսաց հիւպատոսարանին ու այնտեղ ապաստանող ռուսահպատակներին կը սպառնային, եթէ օգնութեան չը հասնէր ռուսաց զօրքը։ Թաւրիզում կենտրոնական իշխանութիւնը ոչ մի բանով չը կարողացաւ առնել ապստամբ աւազակախմբերի դէմը, չը նայած յայտնի Սաթթար խանին իր մուջահիդներով, սակաւաթիւ թնդանօթներով ու ռազմամթերքով ուղարկել էր ռէակցիօներների դաշնակից հրոսակներին պատժելու ու ցրւելու համար... Ի՞նչ եղաւ հետևանքը. Արդաբիլը աւերվեց. միւս կողմից շահսեվանների խաները ու Րահիմ խանը անպաշտպան վաճառականներից յափշտակած ապրանքները բարձած ուղտերի վրա՝ քշվեցին իրանց որջերը։

Զարհուրելի է Թաւրիզից 6 ժամ հեռու հայաբնակ Մուժամբար գիւղը իր շրջակայ գիւղօրայքով։ Յիշեալ գիւղի սահմաններումն էլ անպատիժ գործում է Սամի խանը իր հրոսակ-արբանեակներով։ Շրջակայ գիւղերի թուրք ազգաբնակութիւնը Սամի խանի թալանից ու յարձակումների ահից փախաւ ապաստան գտնելու խեղճ մուժամբարցիների տներում։ Այստեղ էլ առժամանակ ապահով է համարվում շնորհիւ այն հանգամանքի, որ Թաւրիզի ռուսաց հիւպատոսարանի կողմից կօզակներ ուղարկվեցին պարսից 10 կօզակների հետ գիւղը պաշտպանելու Սամի խանի հրոսակներից. և այդ նրա համար, որ գիւղը պատկանում է ռուսահպատակի։ Մուժամբար գիւղն իր շրջակայքով, կարելի է ասել, տակաւին զերծ չէ վտանգից, ըստ որում Սամի խանի պահակները բռնել են ճանապարհները ապագայ գործողութիւնների համար։

Խաղաղ չեն Սալմաստն ու Ուրմին։ Սալմաստի սահմաններում մերթ ընդ մերթ երևում են քիւրդերի զինված խմբեր. ոչ մի վստահութիւն ճանապարհների վրա։ Հայ ու թուրք գիւղացիները ստիպված են զինված ընկերներով անցնել գիւղից գիւղ, հանդ գնալ և յաճախ ենթարկվել կողոպուտների ու սպանութեան. մինչդեռ տեղական իշխանութիւնները անզօր են պահպանելու ցանկալի անդորրութիւնը։

Միանդաբում պակաս չեն անզուսպ յուզումները՝ նոյն իսկ հայ և առհասարակ քրիստոնեայ ազգաբնակութեան դէմ։ Այս վերջին օրերում բռնի մահմեդականացրին տասը տարեկան մի աղջկայ, որի մասին բողոքներ հասել են Ատրպատականի թեմակալին։ Բողոքներ շատ ու շատ ամեն կողմերից վխտում են առաջնորդ Կարապետ եպիսկոպոսի ձեռքի տակ։

Մորմոքիչ վիճակ է տիրում Ղարադաղում՝ կատաղած գայլերի օջախում։ Պատմական հին Փայտակարանի հայաբնակ գիւղերի վիճակը տխուր է ու հեռու պաշտպանութիւն վայելելուց։ Մարդ ակամայ հարց է տալիս ինքն իրան, թէ ինչ խուժադուժ ու այլանդակ դրութեան էր դատապարտվելու բազմամարդ Թաւրիզը, երբ Էյն-ուդ-Դօվլէի խանրիճաղանճ բանակը՝ կազմ և պատրաստ Թաւրիզի դռների առաջ՝ իրանց հրամանատար օֆիցերներին անհնազանդ-անդիսցիպլին զինուորներով ներս խուժէր քաղաք, եթէ սակայն մահու և կենաց փափուկ մոմենտին վրա չը հասնէր գեներալ Սնարսկու զօրաբաժինը, որի ներկայութիւնը պատուար հանդիսացաւ անխուսափելի չարիքների և կոտորած ու թալանների հանդէպ։ Դա անհերքելի փաստ է արդէն։ Փաստ է և այն, որ Թաւրիզի թուրք վաճառականների և մանր ու խոշոր հողատէրերի և կալուածատէրերի արտայայտած համոզմունքով՝ ռուսաց զօրքի ներկայութիւնը Ատրպատականում մանաւորապէս անպայման պահանջ է, քանի գոյութիւն կունենան պարսից պետութեան անկազմակերպ ու անկերպարան կարգերը։ Այլ կերպով, այսինքն ռուսաց զօրքը Ատրպատականից քաշվելու դէպքում, ասում են պարսիկ բարեկեցիկները, երկիրը կենթարկվի ահաւոր անիշխանութեան. իսկ սահմանադրական կառավարութիւնը կը զոհվի ընդվզող ռէակցիօներների քմահաճոյքին։

Ինչպէս վերևում յիշատակեցինք, Ատրպատականի գիւղերում ու քաղաքներում բարեգործութիւնը մուտ չէ գործել. հաղորդակցութեան ճանապարհների գլխովին անապահով. տեղական առևտուրը, արտասահմանի հետ կատարված փոխադարձ վաճառականութիւնը կաղն ի կաղ է ընթանում, որից, ինչ կասկած, մեծապէս է տուժում ժողովրդի տնտեսականը մի կողմից և պետութեան արդիւնքները միւս կողմից։ Երկրի այս ու այն սահմաններում չեն դադարում ի վնաս երկրի խլրտումները, սահմանադրութեամբ հպարտ կառավարութիւնը իսպառ անզօր է դրանց առաջն առնելու։ Ինչ՞ է այս բոլորը, ինչի՞ն վերագրել տիրող անախորժ կացութիւնը, եթէ ոչ՝ այն հանգամանքին, որ իշխանութիւնը չունի դրամական բաւարար աղբիւրներ, տառապում է դրամական խիստ տագնապի մէջ և՝ դրա անմիջական հետևանքով՝ անկարող է կազմակերպելու լաւ կազմակերպված ազգային զօրք՝ պահանջված դէպքում երկիրը խաղաղեցնելու՝ զսպելով այս ու այն կէտերում գլուխ բարձրացնող ըմբոստներին։ Այո, միակ ազդակը, երկիրը բարեկարգ վիճակում պահելու համար, փողն է և կրթված զինուորութիւնը։ Եթէ արտաքին կամ ներքին (հաւանական չէ) փոխառութիւն տեղի չունենայ, այն է՝ երկիր չը մանեն օտար կապիտալներ, դժուար թէ Պարսկաստանին աջողվի իր սեփական ոյժերով կանգնել քաղաքակիրթ հողի վրա։ Սոսկական տենչանքները ոչ մի հետևանք չեն տայ. ճշգրիտ քաղաքակրթութիւնը, կուլտուրական զարգացումը և կրթական կեանքը միայն կեանք կը տան պարսից սահմանադրական ժողովրդին. սակայն դրանք պայմանաւորված են այն ազդակներով, որոնց գոյութիւնը հրամայական է այսօրվայ Պարսկաստանի համար։

Ահա թէ առհասարակ Պարսկաստանի կենսունակ հարցերը որո՞նք են, որոնք արձանացել են նոր պարլամենտի հանդէպ։ Թէ ի՞նչ չափով ուշադրութիւն կընծայէ դրանց ներկայացուցչական մէջլիսը և ինչ կերպով կը լուծվեն հանգոյցները, առանց յոռետես լինելու կը տեսնենք մօտիկ ապագայում։

Հայկազուն

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

23 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նահանգական առեանը որոշեց փակել խաննիտների եղբայրութիւնը։

Կայսրը հրամայել բարեհաճեց դուքս Մեկլենբուրգի մահվան առիթով 15 օրով սուգ պահել պալատում։

Իրականութեանը չեն համապատասխանում այն լուրերը, թէ ոստիկանութեան վերակազմութիւնը յետաձգված է իբր այն պատճառով, որ տարաձայնութիւն է ծագել Ստոլիպինի և գեներալ Կուրլովի միջև։ Ոստիկանութեան վերակազմութեան օրինագծի առաջին մասի քննութեանը արդէն ձեռնարկված է, երկրորդին շուտով կը ձեռնարկվի։

Օրվայ ընթացքում խօլերայով հիւանդացան երեք հոգի. հիւանդների թիւն է 30։

ՄՕՍԿՎԱ։ Վերջին օրերս այն մասում, ուր ապրում է աղքատ ազգաբնակութիւնը, հիւանդացան խօլերայով 49, մեռան 16 հոգի։

Գիշերս կողոպտել են մի զինախանութ։ Յափշտակել են 69 ատրճանակ։

Սօցիալ-դեմօկրատիական կազմակերպութեանը պատկանելու համար ձերբակալվեցին 18 մարդ։

ԽԱՐԿՕՎ։ Բացվեց Ռուսաստանի հարաւային լեռնարդիւնաբերողների համագումարը։ Նախագահում է Վագնէր։

ՆԻՑՑԱ։ Օդագնաց Ֆէրնանդէցի օդապարիկի մէջ 500 մետր բարձրութեան վրա մոտորը պայթեց։ Օդապարիկը վայր ընկաւ. Ֆէրնանդէցը մահացաւ։

Կ. ՊՕԼԻՍ։ Մինիստրների խորհուրդը որոշեց Կ. Պօլսում հեռախօսի գործը յանձնել անգլօ-ֆրանս-ամերիկական սինդիկատին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Վերադարձաւ զինուորական մինիստրը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։
Ընդունում է հիւանդներին՝
Առաւ. ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը։
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։
Կուկիա, Սեմեօնօվսկայա փ. № 16.
Տէլէֆօն № 40.
(ե. ու. կ.) 984. 100—25

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր (առաւօտեան ժ. $12^1/_2$—2.
(երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 11—$12^1/_2$.
Հասցէն՝ Սօլօլակ, Բէհբութեան փ., № 33.
(ա. օ.) 1044. 100—37

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Ներքին և ջղային հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր | առաւօտեան 9—12 ժ.
| երեկոյեան 5—7 ժ.
Միքայէլեան փողոց, № 27.
(ա. օ.) 1087. 100—30

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
„ԼՈՒՄԱՅ“
ամսագրի հոկտեմբերի համար—№ 10, և ուղարկվեց բոլոր բաժանորդներին։
Բացված է բաժանորդագրութիւն
1910 թուի (15-րդ տարի)։
Խմբագիր-հրատարակիչ՝
Գիւտ ա.-ք. Աղանեան
1262. 1—1

ԵԴԵՍԻԱՅԻ եկեղեցական-ծխական օրիորդաց միդասեան և տղայոց երկդասեան դպրոցների համար հարկաւոր է
ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ,
տարեկան 300 րուբլի ռոճիկով և միմիայն սենեակով։ Ռոճիկ կը տրվի պաշտօն ստանձնելու օրից։ Ցանկացողները թող շտապեն գիմել Հոգաբարձութեանս հետևեալ հասցէով. Черезъ гор. Моздокъ въ м. Эдиссiю, Попечительству армянскихъ школъ.
Հոգաբարձութիւն
(չ. ու.) 1263. 2—1

ԵՂԲ. ԱՎԱՐԳԻՍՕՎՆԵՐԻ
այգին բաց է թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի մրգատու ծառեր ու դէկօրատիվ բոյսեր։
Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.). Կատալօգը ուղարկվում է ՁՐԻ։
(չ. կ.) 1105. 15—11

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԱՊՐՈՂ ՄԻ ՀԱՅ
Բժիշկ
32 տարեկան, միայնակ,
ՄՏԱԴԻՐ Է ԱՄՈՒՍՆԱՆԱԼ
ՀԱՅ ՕՐԻՈՐԴԻ
կամ
ԱՅՐԱՑ ՏԻԿՆՈՋ ՀԵՏ,
տարիքը 23—27, նիւթապէս ապահովված։ Մանրամասնութիւնը (կրթութեան կամ ընտանեկան դիրքի մասին) գրաւոր (հայերէն կամ ռուսերէն) իր մի լուսանկարի հետ ուղարկել (заказнымъ) այս հասցէով՝ гор. Рыбинскъ, до востребованія Ф. М. Бѣлова, для доктора. Գրութիւնը կը մնայ գաղտնիք. լուսանկարը կարելի է յետ դարձնել։
(չ. շ.) 1262. 2—1

Բացված է «ԱՂԲԻՒՐԻ» և «ՏԱՐԱԶԻ»
1910 թ. բաժանորդագրութիւնը
Վեհափառ Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ. Կաթողիկոսի 18 գոյնով ծիթանկար մեծադիր պատկ., ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆԸ Սանահնում, դարաւոր հոյակապ նուիրական սրբազան կամարների տակ, որ մեր հսկողութեամբ և մեր յատուկ լուսանկարիչների հանած լուսանկարից պատրաստված է արտասահմանում հռչակաւոր նկարիչների ձեռքով և տպագրված է արտասահմանում, կուղարկվի «ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ» միենոյն հասցէով ստացող բաժանորդներին «ՏԱՐԱԶԻ» դեկտեմբերի արտակարգ №-ի հետ, նուիրված Նորին Վեհափառութիւն Ամենայն Հայոց Հայրապետին։ «ՏԱՐԱԶԻ» այդ №-ը պատկերի հետ 3 ր. Նրանց համար, որոնք բաժանորդ չեն ներկայ 1909 թ. և առաջիկայ 1910 թ. համար էլ չեն բաժանորդագրվելու։
Հասցէ՝ Тифлисъ. Редакція „Агбюръ-Таразъ“.
(չ.) 1240. 2—2

ԷԺԱՆ ԱՆԿԱՐԵԼԻ Է!!
2 ր. 75 կ.։



Ուղարկում ենք վերադիր վճ. «Տրիումֆ» չէվիօտը, $4^1/_4$ արշ., տղամարդկանց հագուստի համար։ 2ը նայած չափազանց էժանութեան՝ «Տրիումֆ» կտորը բրդից է (ոչ բամբակից) և ունի բոլոր յատկութիւնները ամենալաւ կտորների—միանգամայն ամուր, ձեռնտու և շքեղ է։ Գոյները՝ սև, կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն։ Ճանապարհածախքը 55 կ.։ Երեք և աւելի կտոր բերել տալուց ճանապարհածախքը մեր հաշւին։ Պահանջները հասցէագրել՝ Въ фабрику Т—ва „ЭХО“, г. Лодзь, № 15.
Թղթակցութիւնները ռուսերէն լեզուով։
(չ. կ.) (В. 58110) 947. 0—19

Լոյս տեսաւ և վաճառվում է
ՅՈՎՀ. ԷՄՄԱՍՍԷՈՍԻ
→ ԷՄՄԱՆՈՒԷԼ ←
Ողբերգ. 5 արարուածով
ԳԻՆՆ Է 80 ԿՈՊ.
Գումարով գնողներին 20% զեղջ, ճանապարհածախսը մեր հաշւին։ Հատով ցանկացողները կարող են ուղարկել պօստի մարկաներ։ Դիմել՝ Тифлисъ, почт. ящ. № 140, Геворку Бабурянцъ.
(օ. մ.) 1229. 5—5

ՀՕՆՕՐՐԷԻ (ՏՐԻՊՊԵՐ) ԴԷՄ
ՆՈՐ-ՄԻՋՈՑ
„SALO—**ՊԻՁԻԼԻՆ**“
Ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատուն միջոց։ Գործադրելու ձեռնարկը կցված է արկղիկին։ Իսկականը մետաղեայ արկղներում, հատը՝ 1 ր. և1 ր. 80 կ.։
Միաժամանակ լաւ է ներգործում թէ սուր և թէ յարատեւ բնոյթ ունեցող դէպքերում և կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայայտնի ընթացքը։
ՊԱՀԵՍՏԸ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека Б. Конгейма.
Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախքը պօստային սակագնով։
Գտնվում է Կովկ. Ընկ. դեղային ապրանքների վաճառանոցում։
(շ.) (П. 124817) 540. 0—10

ԲԱՑՎԱԾ Է 1910 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
XXVIII Տարի **ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ** XXI Տարի
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ
Հրատարակվում են ճոխ, բազմաբովանդակ, մասնակցութեամբ մեր և եւրոպական ականաւոր գրականագէտների, հրապարակախօսների, լրագրողների, արուեստագէտների և գեղագէտների։
ԱՊԱՌԻԿ կամ մաս-մաս վճարող բաժանորդ չէ ընդունվում։
✦ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ✦
1) ԱՂԲԻՒՐ դպրոցական աշակերտուհիների և աշակերտների համար տարեկան ՄԷԿ ՌՈՒԲԼԻ (1 ր.)։
2) ԱՂԲԻՒՐ և ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ ս. ՍԱՀԱԿԻ, ս. ՄԵՍՐՈՊԻ և ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ մեծադիր 3 պատկերներով տարեկան ԵՐԿՈՒ ՌՈՒԲԼԻ (2 ր.)։
3) ԱՂԲԻՒՐ դպրոցների, գրադարանների, հաստատութիւնների և հասակաւոր բաժանորդների համար 3 ր. (Արտասահման 5 ր.)։
4) ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ, Աղբիւրի Ակունք դպրոցական աշակերտի հասցէով, ընտանիքների համար, ՏԱՐԱԶԻ քսանամեակը լրացնելու և 21-րդ տարին թևակոխելու առիթով 10 րուբլուց իջեցնում ենք բաժանորդագինը 5 րուբլու։ Մինչև դեկտեմբերի 15-ը ստորագրվող բաժանորդներին կուղարկվեն և պրէմիաները՝ Վեհափառ Իզմիրլեանի բազմագոյն ձիթանկար և ս. Սահակի, ս. Մեսրոպի, Միքայէլ Նալբանդեանի մեծադիր 4 պատկերներն էլ։ Դեկտեմբերի 15-ից յետոյ բաժանորդագրվող աշակերտները վճարում են այդ պրէմիաների համար մէկ րուբլի, այսինքն փոխանակ հինգ րուբլու՝ վեց րուբլի։
ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ, Աղբիւրի Ակունք, յաւելուածներ և պրէմիաներ դպրոցների, հաստատութիւնների, գրադարանների և հասակաւոր բաժանորդների համար տարեկան 10 ր., արտասահման 18 ր. կամ 50 ֆր.։
Հասցէն Тифлисъ, Редакція „АГБЮРЪ“-„ТАРАЗЪ“. Tiflis (Caucase) Rédaction „AGBÜR-TARAZ“.
Խմբ.-հրատ. Տ. Նազարեան
(չ. կ.) 1239. 5—3



ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
ԾՈՑԻ և ՊԱՏԻ
1910 Թ.
„ՇԻՐԱԿ“
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
XII տարի
Բոլորովին նոր յաւելուածներով, ճոխացած ու հարստացած և գունաւոր պատկերներով զարդարված։ Դիրքն ու ծաւալը եղած բոլոր հայ օրացոյցներից մեծ և արտաքինով շքեղ։ Երեսների թիւր 320։
ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է մաքսակների օրէնքներ և օրինակներ, չափ և կշիռ, դրամներ։ Դրոշմատուրք, բնակարանի հարկ, վարձատրութիւն դատական պրիստաւների, նոտարների, երդուեալ-հաւատարմատարների։ Պօստ և հեռագիր, պօստային օրէնքներ, խնայողական գանձարաններ և մարկաներ։ Զինուորական օրէնքներ, նորակոչ զինուորների չափը, անցագիր և բողոքելու առեանները։ Կտակի, որդեգրութեան օրէնքներ կտակի, պայմանագրերի, վաճառականական նամակների օրինակներ։ [illegible] շոգենաւեր և պօստային կառքեր։ Տօմարական և աստղաբաշխական [illegible] մոլորակներ, երկիր, գիսաւորներ, պօլիտներ, երկնաքարեր։ Մար[illegible] վիրաբուժութեան առաջադիմութիւնը, նշանաւոր երկրաշարժներ, [illegible] ունքը, կեանքի տասնաբանեան, սառը ջրի օգտակարութիւնը և օգտ[illegible] խրատները, Թող վազեն մանուկները, մաքրութեան նշանակութիւնը։ [illegible] կեծիքները։ Գիւղատնտեսական—մեղուաբուծութեան շահաւէտու[illegible] ատու կովերի ընտրութիւնը, նրանց կերակրելու ձևը, ինչպէս պէտք [illegible] ւսաւոյքի և դարաղի դէմ կարուկ միջոցներ։ Ճերմապահական [illegible] սական նպատակները։ Ի՞նչ է կօօպերացիան։ Ազգերի կրօնները [illegible] թիւն։ Այլևայլք—մարդկանց, կենդանիների երկարակեցութիւնը, մե[illegible] մէջ, պարսից շահի սուրը, հայ և պարսկերէն նման բառեր, ա[illegible] խաղեր, պարապ ժամերի զբօսանք, զուարճալի վիճակաբան։ [illegible] ըր՝ Ալ. Մանթաշեան, Յ. Խուդադեան, Ն. Բուդաղեան, Տ. Աֆրի[illegible] Ա. Մատինեան իրանց գունաւոր պատկերներով։
[illegible] ճանապարհորդութիւն Կ. Պօլսից մինչև Էջմիածին և օծումը, Վեհի [illegible]
[illegible] տպագրված են մեծ տառերով թէ երբ պետական հիմնարկութիւն[illegible] հարուստ ժամանակագր. և բանաստեղծ. փոքրիկ հատուածներ։ Երկ[illegible] ութիւններ, գիտական նորութիւններ, բնութեան երևոյթների բա[illegible] խրատներ, արհեստների վերաբերեալ օգտակար գիտելիքներ, ա[illegible] ութիւններ, պատմական նշանաւոր դէպքեր հայկական, ռուսական և [illegible] տեղեկութիւններ։ Ազգային քնար—բանաստեղծութիւններ, ալբա[illegible] երգեր, հետաքրքրական տեղեկութիւններ բուսական և կենդա[illegible] իններ, զուարճալի անեկդոտներ մեծ մարդկանց կեանքից։ Խոհա[illegible] տիքներ, տնային խաղեր։ Ժողովրդական առածներ, երգեր, լէ[illegible] զարդարուած նոր առակներ և այլ հետաքրքրական տեղեկութիւններ։
ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ պատրաստուած է լիտօգրաֆիայում մի քանի գոյնով. Ներկայացնում է «Հայաստանը և հայի անցեալ փառքը»։ Հայ թագաւորների և իշխանների պատկերները—Հայկ Նահապետ, Արամ քաջ, Պարույր Հայկազն, Տիգրան Երուանդեան, Վաղարշակ Արշակեան, Արտաշէս Աշխարհակալ, Տիգրան Մեծ, Արտաշէս Երկրորդ, Վռամշապուհ, Աշոտ Բագրատունի, Աշոտ Երկաթ, Սմբատ Զահրեղ, Ռուբէն իշխան Կիլիկիոյ, Լևոն Ա., Լևոն Զ. վերջին թագաւոր հայոց. պատկերները մեծ մասամբ իրանց դրամներից են վերցված։
Գները՝ պատինը—50 կոպ., ծոցինը—20 կ., գումարով գնողներին զեղջ։
Դիմել՝ Александрополь, типографія «Ширакъ», Карапету Апинянъ. Արտասահմանից—Alexandrople, Karapet Apiniane (Caucase).
Ալէքսանդրօպօլում չը դիմել ուրիշ ոչ մի հասցէով։
Ցանկացողներին աւելի մանրամասն տպագրված բովանդակութիւնը կուղարկվի ձրի։
(չ.) 1101. 8—6

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱՒՈՐ ԲՈՒԺԱՐԱՆ
30 ՄՇՏԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐՈՎ ԵՒ ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐՈՎ
Կուէնիեվսկայա փող., № 7, սեփ. տ., «ՎԵՏՑԵԼ» հիւրանոցի մօտ, Տէլէֆօն № 590.
Հիւանդներին ընդունում են հետևեալ մասնագէտ բժիշկները.
ԳԱՄԲԱՇԻՁԷ Վ. Դ.—ներքին եւ երեխ., ամեն օր, բացի կիրակի օր., 11—12 ժ. ցեր.։
ԳԵԴԵՎԱՆԻ Մ. Ա.—ջղային եւ ներքին., երկուշ., չորեքշ., ուրբաթ, $10^1/_2$—11 ժ. առ.
ԳՈՒՐԿՕ Ա. Գ.—ներքին, շաբաթ՝ 1—2 ժ., կիրակի՝ 11—12 ժ.։
ԿԱՐՇԻՆ Ա. Ա.—կաշուի եւ վեներ., ամեն օր, բացի կիրակի օր., $2^1/_2$—$3^1/_2$ ժ. ցեր.։
ԿԻԿՕՁԷ Տ. Ս.—ներքին, երկուշաբ. և ուրբ. 9—10 ժ. առ.։
ՄԱՂԱԼՕՎ Գ. Գ.—ներքին, երեքշ. և շաբաթ, 10—12 ժ. առ.։
ՄԱՆՍՎԷՏՕՎ. Վ. Մ.—ներքին, երկուշ., հինգշ. և շաբաթ, 1—2 ժ. ցեր.։
ՄԵԼԻՔՕՎ Ն. Մ.—վիրաբուժ. եւ կանանց, ամեն օր՝ 12—1 ժ. ցեր.։
ՄՈՒՍԽԷԼՕՎ Վ. Ս.—աչքի, երկուշ., չորեքշ. և ուրբաթ, 2—$2^1/_2$ ժ. ցեր.։
ՓԻՐԱԴՕՎ Ր. Բ.—վիրաբուժ., ամեն օր՝ 11—12 ժ. առ.։
ՊՕՊՕՎ Բ. Ա.—ականջի, կոկորդի եւ քթի, ուրբաթ, 2—$2^1/_2$ ժ. ցեր.։
ՐՑԽԻԼԱՁԷ Ն.—ատամի, ամեն օր՝ 9—10 ժ.
ՍՕԲՕԼԵՎՍԿԻՅ Գ. Վ.—վիրաբուժ., ամեն օր՝ 10—11 ժ. առ.։
ՏԻԿԱՆԱՁԷ Ի. Ե.—կանանց եւ մանկաբ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.։
Բաժանմունքն ունի միկրօ-քիմիակ. և բակտերիօլ. հետազօտութիւնների համար լաբօրատօրիա։ Կառավարում է ավրոպ. բժ. Ն. Գ. Ֆէօդօրօվ։ Խորհրդի վճ. 50 կ.։ Ստացիօն բաժան. 2 ր. սկսած։ Օպերացիաները. համախորհ., էլեկտր., մասսաժ., ծաղկի պատուաստ., ծծմայրերի քնն. և այլն առանձին վճարով։
(չ. ու. կ.) 1017. 100—32

ՎՕԿԶԱԼՆԻ ՄԱՍՆԱՒՈՐ ԲՈՒԺԱՐԱՆ
Երթևեկ հիւանդ. համար ամեն օր, Վօկզալնայա 8, տ. Էնֆիաճեանցի, տէլէֆօն 695.
Ս. ՎԱՇԱԿՄԱՁԷ ատամնաբոյժ, ամեն օր, 9—10 ժ. առ.։
Ի. Դ. ԳՕՄԱՐԹԷԼԻ ամեն օր, ներքին և երեխաների, 2—3 ժամը։
ԴԻԱՍԱՄԻՁԷ սիֆիլիս, վեներ. եւ կաշուի հիւ. ամեն օր, $11^1/_2$—$12^1/_2$ ժ.
Ն. Մ. ՄԵԼԻՔՕՎ ամեն օր, խիրուրգիական և կանանց հ., 1—2 ժամը։
Բ. Ա. ՊՕՊՕՎԵԱՆ ամեն օր 12—1 ժ. բացի կիրակի օրերից, կոկորդի քթի և ականջի։
Վ. Ս. ՄՈՒՍԽԷԼՕՎ երեքշաբ., հինգշաբ. և շաբաթ օրերը, 2—$2^1/_2$ ժ., աչքի հիւանդ.։
Ն. Գ. ՖԷՕԴՕՐՕՎ ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, 11—12 ժ., ներքին և երեխայոց հիւանդ.։
Հիւանդանոցում կատարվում են միկրօսկօպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս ծաղկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն։ Վճարը խորհրդի համար 50 կօպէկ։ (չ. ու. կ.) 1032. 100—31

200 ՌՈՒԲԼԻ ՆՈՒԷՐ ԵՆՔ ՏԱԼԻՍ



ով կապացուցի, թէ մեր ապրանքը չէ համապատասխանում գնին. 12 ր. տեղ 3 ր. 95 կ. ուղարկում ենք 17 անհրաժեշտ արժէքաւոր իր. 1) սև պողպ. ժամ. անկէր կամ կանանց ց լինդ., 40 ժ. մէկ առանց բանալիի լարվող ժամ., 8 տարվայ երաշխաւոր. 2) գեղեցիկ, չը սևացող շղթայ. 3) Նոյնպիսի բրէլօկ. 4) զամշի պարկ, ժամ. փչանալուց պահելու. 5) կաշուէ նորաձև քսակ 6 բաժ. 6) շահաւէտ նորոյթ - ամերիկակ. անփառանգ «Սանիտա» ածելի, որով ամեն ոք կարող է անվնաս և շատ հեշտ սափրվել. 7) սափրվելու վրձին. 8) նիկէլի թաս. 9) ածելին սրելու փոկ. 10) գեղ. զուրլէ մատանի «Օպալ» քարով. 11) Պարիզի նորոյթ «Պլաստօգ», որը բնականօրէն ցոյց է տալիս զանազան տեսարաններ. 12—17) 6 հատ հետաքրքրաշարժ նկարներ «Պլաստօգի» համար։ Այս բոլոր իրերն ուղարկում ենք միայն 3 ր. 95 կ., 2 զարնիտ. 7 ր. 40 կ., պատուէրն ստանալուց պէս, վեր. վճ. և առանց կանխավճ. Նոյնպիսի զարնիտ., աւելի լաւ մեխանիզմ ժամաց. 4 ր. 50 կ. 2-ը 8 ր. 50 կ.։ Ցիշեալ զարնիտուրը փակ ժամացոյցով՝ 1 ր. թանգ։ Ճանապ. 40 կ. (Սիբիր 75 կ.) Հասցէն՝ Т-во ЗАРЯ Варшава.
Խնդրում ենք հասցէն կարճ և կլոր ծրարի երեսին։
(В. 63520) 1019. 11—8

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ
Ի նկատի ունենալով, որ վաճառքի է հանված առողջութեան համար վնասակար կեղծ Սպերմին, որ առաջարկվում է զանազան անունների տակ, անհրաժեշտ է գնելու ժամանակ ուշադրութիւն դարձնել հետևեալ անուան վրա՝
ՍՊԵՐՄԻՆ ՊԷԼԻ
ՊՐՕՖԷՍՍՕՐ-ԴՕԿՏՕՐ
SPERMINUM POEHL 1901
և պահանջել այդպիսին Գործարանական ձևի [illegible] կապոցի մէջ,
ՊՐՕՖԷՍՍՕՐ-ԴՕԿՏՕՐ ՊԷԼԻ և ՈՐԴԻՔ, ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
Ռուսական և արտասահմանեան գրականութեան մէջ եղած բազմաթիւ գիտական դիտողութիւնները առաջնակարգ գիտնականների և բժիշկների կողմից Սպերմինի փրկարար ներգործութեան մասին—նևրաստենիա, սեռական թուլութիւն, ծերութիւն, իստերիա, նևրալգիա, արեան պակասութիւն, թոքախտ, սիֆիլիս, սրտի [illegible] հիւանդութիւններ (չափազանցութիւն, սրտի պնդախտութիւն, սրտի բաբախումն, պերեբրօ, միօկարդիտ), զարկերակի կարծրացումն, ալկօհօլիզմ, ողնաշարի հիւանդութիւն, կաթուածներ, հիւանդութիւններից թուլացումն, յոգնածութիւն և այլ հիւանդութիւններ ունեցած ժամանակ—
ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ԲԱՑԱՌԱՊԷՍ ՊՐՕՖ.-ԴՕԿՏ. ՊԷԼԻ ՍՊԵՐՄԻՆԻՆ։
ՊԷԼԻ ՍՊԵՐՄԻՆԸ ցանվում է բոլոր դեղատներում և դեղավաճառ խանութներում. 1) կաթիլների ձևով (Essentia spermini—Poehl), 1 սրուակը—3 ր., և ներարկելու՝ 2 ամպուլլաների մէջ մաքուր [illegible] համար (Sperminum-Poehl pro injectione), 1 արկղիկը—4 անօթ [illegible] համար—3 ր. և 3) կլիզմի համար (Sperminum-Poehl pro clysm), 1 արկղիկը—4 կլիզմի համար—3 րուբլի։
Ձրիաբար ուղարկվում է „Целебное дѣйствіе Спермина-Пеля“ գիրքը 102 էջ. որ պարունակում է ռուս և այլազգի բժիշկների դիտողութիւնները, նոյնպէս և „Органотерапевтическій Сборникъ“ երկրորդ հրատար. գիրքը՝ պրօֆեսսոր-դոկ. Պէլի ցուցմունքներով գործարանային ուրիշ կազմ. վերաբերմամբ։—Բոլոր պահանջման պ. պ. բժիշկներին ուղարկվում է գիտական յատուկ գրականութիւն։
Органотерапевтическій институтъ, химическая лабораторія и аптека
Профессора Доктора ПЕЛЯ и Сыновей
въ С.-ПЕТЕРБУРГѢ. Вас. Остр., 7 линія, д. 18—267.
Ամենաբարձր մրցանակներ «Grand Prix» աշխարհիս բոլոր ցուցահանդէսներում և ամենալաւ գովասանքներ բժշկականութեան մէջ գործող հեղ. անձերի։
(П. 108276) 720. 8—6

Электропечатня Ав. Мугдусіакопова съ С-ми. Большая Ванская № 3.